

# Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

3507 ՏԱՐԻ

1886 ՅՈՒՆՈՒԱՐ 18

ԹԻԻ 3805

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 18 ՅՈՒՆՈՒԱՐ

ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

## Ա. ՊՈՒՇԸ

Ա.

— Իրա՞ն կ'ըսես :

— Իրաւն ալ խօսք է : Ո՞ր աշխարհքին մէջ կ'ապրիս , Սահա՛կ աղա . մեղք որ Ղաւթիա մեծցեր ես :

— Ի՞նչ գիտնամ . ես իմ գործս կը նաշիմ :

Այս վերջին խօսքերուն հետ Սահակ աղա երկու դաւաթ գարեջուր եւս տպւոսալընց :

Մխախտի գոյորչներն ոլորտապտոյտ բարձրանալով մառախլապատ երեւոյթ մը կ'ընծայէին Մուրատի գարեջրանոցին , որոյ անկիւններէն մին առանձնացեալ Սահակ աղա եւ իւր բարեկամը Աբրահամ աղան , ծխելով կը խօսակցէին :

— Այդ Տիմիթրին , կ'ըսէր Աբրահամ աղա , հինգ ոսկի ունէր չունէր , չորս տարի չկայ . նստած էինք ճիշդ այստեղ ուր ենք . եկուր քօնսօլիտ խաղայ , ըսի . ընկ մընկ ըրաւ . բայց խօսքի եկաւ : Շիտակն ըսեմ կորսնցուց . գիմացիր ըսի , գիմացաւ . կորուստն հանեց , վատկեցաւ : Ի՞նչ երկնցընեմ , աղա , այս օրուան օրս հազար հատիկ ոսկի ունի , հազար հատիկ կլորիկ դեղին : Ե՛յ աշխարհք :

Ի խորոց սրտի այդ հառաչանքովն Աբ-

րահամ աղա ձեռքը սեղանին զարկաւ , դաւաթները վերստին լեցուեցան :

— Դուռն , աղաս , այդպէս կեցիր : Մա՛րդ Սատուծոյ , պզտիկ գործով մը բաղդդ փորձէ , աշխարհք չիլնիր :

— Աղէկ կ'ըսես . բայց վիճակս չե՞ս գիտեր . մերիններն եթէ իմանան զիս կը ճամբեն , ուրիշ բան չեն ըներ :

— Ո՛ւր պիտի իմանան : Ի՛նչ եւ է , քու գիտնալու բանդ է . այդպէս մնացիր . վախկոտ մարդուն գործն առաջ չերթար :

— Ա՛լ երթանք , առենք ուշ է :

Փետրուարի վերջի իրիկուններէն մին էր . ձմրան պարզ , ցուրտ , պայծառ , ախորժեղի իրիկուն մը : Երկու բարեկամներն յամրաքայլ կը բարձրանային ի Բերա , խորասուզեալ մտածութեանց մէջ :

Սահակ աղա մտայոյզ էր խորհելով իւր վիճակին վրայ : Քսան եւ հինգ տարիներ էին յորմէ հետէ կը ծառայէր իւր արդի տէրերուն , եւ ի՞նչ եղած էր : Տուն միայն ունէր յորում կը բնակէր . խնայողութիւններ ընելով կրցած էր Ռոպէրթ դպրոցը դնել իւր Լեւոն դաւակը , բայց դեռ չատ տարիներ պէտք էին որ նա ուսումնաւարտ լինէր : Աղջիկը կը մեծնար եւ սակայն չէր կարելի գեղածիծաղ ապագայ յուսալ նորահամար . ի՞նչպէս ամուսնացնել զնա : Ինքն ալ կը ծերանար :

Բայց չատ աւելի աղջամղջին էին Աբրահամ աղայի խոհերն : Անձանօթ ապագայի անձանօթ տառապանքներով չէր տառապեր նորա ոգին : Նա կը մտածէր թէ չատ է աւուրն չար իւր : Բայց այդ «օրուան» հոգը ահռելի է դատարկ գրպանի մը համար : Յիսուս տարին հասած էր Աբրահամ աղանիս , առանց գիտնալու թէ ի՞նչպէս ապրած

էր : Օրն օրին բան մը ընելով, երեկոյները ձերմակ պարկն ի ձեռնին տուն կը մտնէր . բայց բաւական ժամանակէ հետէ շատ օրեր ազատ կը մնար այդ պարկը դրպանէն հանելու եւ ծաղրերը բանալու հարկէն : Այս վերջին օրերը կեդրոնացուցած էր իւր բոլոր յոյսերը Սահակ աղայի վրայ : Այդ միջոցին զնա բազմաթիւ շինելու արժէթղթոց վրայ խաղալով : Ինքը պիտի կատարէր միջնորդի դեր : Եւ ահա այդ փորձն ալ կը մնար ապարդիւն : Անբնական չէր ուրեմն որ քիթն ու բերանը ծռուկելով, ցած ձայնով, դիչեր բարի միմւաց երբ մտան Բերայի Թաւրա՝ Պաշիի փողոցներէն միոյն մէջ : Սահակ աղա հրաւիրեց զնա ընթրիքը միասին ընելու . առանց շատ դժուարութեան Աբրահամ աղա ընդունեց հրաւերը, զի Աստուած միայն զիտէր թէ իւր տունը ինչ կը դառնար սեղանին վրայ :

Յետ ընթրեաց երկու բարեկամները նարտ խաղացին . երբ խաղը վերջացաւ, Աբրահամ աղա դիտելով որ Սահակ աղա խոժոռ չէ, ուղեց վերջին փորձ մ'ընել :

— Է՛յ, ի՞նչ մտածեցիր տեսնենք, ըսաւ :

— Ի՞նչ բանին համար :

— Քօնստանտինի համար :

— Ի՞նչ մտածեմ . հասկցայ, ձեռքէդ չափաւ աղատիմ . մարդ մարդու քահանայ, մարդ մարդու սատանայ կ'ըսեն . բան մը ընենք երթայ :

— Փա՛նք քեզ Աստուած : Վաղն սկսինք . ի՞նչ ալ աղէկ օր, հինգշաբթի է : Առտուն Լուսաւորիչ կ'երթանք, մոմ մը կը վառենք, Փրկիչին ալ բան մը խոստանալով ամէն ինչ յաջող կ'երթայ :

— Ի՞նչ կ'ըսես, տղա՛յ ես, ի՞նչ ես :

— Լռէ՛, թերեհաւատ մի՛ ըլլար . Ամէն յաջողութիւն հաւատքէն կուգայ : Տիմիթրօն ալ խաղալու սկսած առջի օրը հետս Լուսաւորիչ եկաւ, մոմը վառեց, ուխտը ըրաւ : Յոյն էր, բայց մեր Փրկիչին զօրութիւնը տեսաւ :

— Թող այդ ալ այդպէս ըլլայ, ըսաւ Սահակ աղա խնդալով :

Առաւօտուն երկու բարեկամներն իջան Ղալաթիա : Ուխտաւորք խոսնելոյս կը դիմէին ի Ս. Լուսաւորիչ : Հաւատացելոց քայլերուն առաջնորդն յեկեղեցի, հաւանօրէն Աստուծոյ արքայութեան արժանա-

նալու տենչը չէր միայն : Այս մասին կարելի էր ճիշդ եւ որոշ կարծիք մը ունենալ մտնելով այն նեղ կեղտոտ փողոցն որ կը տանի ի Լուսաւորիչ : Անդ ամէն հինգշաբթի ցուցահանդէս մը կայ Պոլոյ մուրացիկներու : Այդ մուրացիկներն թէ՛ աւանդութեամբ եւ թէ՛ իրենց երկար փորձառութեամբ լաւ գիտեն որ սրտերն անշարժ են վերացական մաղթանքներու առաջ . ողորմածներու քրտակները կը բացուին միայն դրական շահուց տկնկալութեամբ : Աղքատները կը մաղթեն քրթեքաց յաջողութեան, ցաւերէ ցեցերէ քրկոթեան, արքի մարտի : Հազիւ թէ աղքատ մը տեսնելով ծերունի մը կ'ըսէ անուշիկ ժաւելներու հոգեւն : Իսկ հոգւոյ փրկութիւնն : Աստուծոյ արքայութիւնն . մուրացիկներն, բարեպաշտութեան այդ հոգեբաններն, բաւական խելացի են իրենց շունչը չսպառել աւելորդ մաղթանքներով :

Երկու բարեկամները մտան այդ բարեպաշտներու խումբին մէջ : Ի դիմաց Սահակ աղայի Աբրահամ աղա մեծ մոմ մը վառելով Փրկիչին առաջ, կէս մէճիտ ալ պնակը ձգեց եւ անշուշտ Աստուծոյ հետ ընկերակցութիւնը լաւ պայմանագրեալ համարուեցաւ երբ տիրացու լուսարար Եփրեմն ի խորոց սրտի « Աստուած չէն ու պայծառ պահէ » նուիրական բանաձեւն արտասանեց :

Դեռ շատ կանուխ էր երբ մտան Քօնստանտինի խան, ուր է արժէթղթոց սակարանը, Պարսն : Սակարանի բացման պաշտօնական պահալը դեռ նոր կը հնչէր : Սենեակները բացուելու վրայ էին : Սաստիկ ցուրտ կար : Հայ, Յոյն, Հրեայ ծառաները թափառական կը շրջէին խանին մէջ : Ամէնքն ունէին իրենց թեւերուն ներքեւ տետրակներ եւ աջակողմեան տկանջներուն վրայ մատիտներ : Շարժման առաջին նշանները կ'երեւէին : Սահակ աղա սարսուռ զգաց, կ'ուզէր ետ դառնալ, բայց արդէն երկաթէ սանդուղներուն վրայ էր եւ մտան Քալոմաճի Թրիանտաֆիլիտի սենեակն, ուր պէտք եղած դրուը տալով 500 հատ ծախեցին, Աբրահամ աղայի անունն :

Երկու շաբաթ վերջ առաջին լիթիսմոսին փողերի շահ մը կը մնար . Աբրահամ աղան ալ իւր միջնորդագիրն կ'առնէր :

Անցան քանի մը ամիսներ եւ գործը շատ յաջող էր . Սահակ աղա սկսած էր



բաւական քանակութեամբ դնել երբ աշնան վերջի օրերն ցերեկ ատեն յոյն տղայ մը հապճեպով եկաւ Սահակ աղայի դրասենեակն եւ առանց երկար յառաջաբանի ըսաւ .

— Սինեօս Թրիանտաֆիլիտին կ'ըսէ թէ քօնօրիտը կ'իյնայ :

Սահակ աղայի դոյնը նետեց : Առաջին անգամ ըլլալով հասկցաւ թէ ո'րպիսի վէտանդներէ պաշարեալ է : Ի՞նչ պիտի ընէր եթէ այդ տղան մի քառորդ առաջ դար մինչ հոն էին իւր տէրերն : Առանց բռնել մը կորսնցնելու դուրս ելաւ , դնաց դտաւ Արքաճամ աղան : Նա պատասխանեց թէ բան մը չկայ եւ դնաց Թրիանտաֆիլիտին , բայց շուտ վերադարձաւ քիթը բերանը ծակաւ . — Բան չկայ , քանի որ է կ'անցնի . քիչ մը բան տուր թո'ղ մնայ : Հարկը ոսկիի պէտք կայ :

Սահակ աղա կարծես թէ կաթուածահար էր : Իւր քօնն առանդ գտնուած ստակէն , որ իւր տէրանցն էր , մաս մը խռած էր , տալով զայն իբր դրաւ աւելի մեծաքանակ գնումներ ընելու : Շուարած էր այժմ Սահակ աղա . բայց իւր բարեկամը , միշտ անյողդողդ , տոկալու հրաւէր կը կարգար : Հակառակ իւր խղճին , Սահակ աղա հարկադրեցաւ 100 ոսկի եւս բերել : Վաճառեցին յոյսեր տուաւ եւ քաջալերութիւններ :

Առաւօտուն Արքաճամ աղան կանուխ եկաւ , միասին իջան Ղալաթիա . երբ Թիւնէլէն ելնելով հասան Քարաքէօյի ծայրը , նշմարեցին Փօմիսիօն խանի առաջ արտասովոր շարժում : Սահակ աղայի ոտքերը կը կտրտէին . չէր համարձակեր ո եւ է հարցում ուղղել :

Քաղմութիւնը դրաւած էր Փօմիսիօն խանի մեծ դուռը , փողոցին երկու կողմերը . մինչեւ կամուրջին մօտ կրպակներուն առաջ , կազմուած էին զանազան խումբեր . մառախլապատ էին ամէն դէմքեր :

Երկու բարեկամներն ուղղակի Թրիանտաֆիլիտին գնացին : Նոտած գրասեղանին առաջ , Վաճառեցին գլուխը կախ հաշիւները կը նայէր : Հաշիւ թեթեւ բարեւ մը տուին . տեղեկացան իրաց վիճակին : Հաշիւը գլուխ գլխու էր : Քաճառ պէտք էր : Սահակ աղայի բերանը չէր բացուեր :

Խորհուրդ ըրին . արդիւնքն այն եղաւ որ այդ կոտորած գնորդ պէտք էր քիչ մը ապրանք եւս առնուէ : Բանէն կ'անցնէր շուտով , գինները կը բարձրանային , ամէն ինչ կարգի կը մտնէր :

Սահակ աղա , ինչպիսի ամէն խաղաղու , իւր անձին տէրը չէր . դնաց բերաւ ինչ որ կը գտնուէր սնտուկին մէջ : Իւր աղաները շարաթը մի անգամ կ'իջնէին կղզիէն , ուրեմն ապահով էր թէ շարաթուան մէջ ամէն ինչ կարգի կը մտնէ :

Բայց սակարանի այն օրերն էին յորում ամէն խմատութիւն կը շուարի . դնաց անկումը կը շարունակէր . մեծ դրամատունները կը վաճառէին յերաշխաւորութիւն տրուած գրաւներն : Այդ առաւօտէն երկու օր վերջ նոր դրաւի հարկ կար . Սահակ աղա այլ եւս ոչինչ կրնար տալ . վաճառեցին չէր սպասեր . հաշիւները փակուեցան . Սահակ աղա նախկին իւր բոլոր շահերը կորսնցնելէ վերջը կը կորսնցնէր նաեւ 400 ոսկի որք իւր տէրանցն էին :

Շուարած էր խեղճ մարդն եւ յուսահատ , բայց հարկ էր սթափիլ եւ տնօրինել միջոցներ որպէս զի իւր աղաները չխմանային եղելութիւնը : Որոշեց անմիջապէս կա'մ գրաւ դնել կա'մ ծախսել տունը որ մօտ 500 ոսկի կ'արժէր :

Երկու օրերէ ի վեր մեծ փութաջանութեամբ հետամուտ էր այդ գործին երբ երրորդ առաւօտուն դրասենեակ գալով անդ գտաւ իւր աղաներուն կրտսեր եղբայրը . Սահակ աղայի դոյնը նետեց . հասկըցաւ թէ բան մը կայ :

Արդարեւ աղային բարեկամներէն մին առջի օրն ըսած էր նմա . « Կ'երեւի թէ հրամանքնիդ ալ քաճառ կը խաղաք . ձերինը ( ակնարկելով Սահակին ) Պօսայէն դուրս չեներ : » Երբ աղան զայս իմացաւ յաջորդ առաւօտն առաջին շողեկանով կղզիէն Ղալաթիա եկաւ :

Տեսնելով իրենց գործակատարը , քիչ մը հարցուիորձ ըրաւ եւ ըսաւ թէ երկու հարկը ոսկի տայ : — Սահակ աղա չպատասխանեց . անշարժ կեցաւ :

— Ի՞նչ կայ . ինչո՞ւ չես բերեր :

Ի՞նչ բերէր : Աչքերը լեցուած էին . պատասխանեց թէ փորձանքի հանդիպեցաւ , բայց թո'ղ անհանգիստ չըլլան . շարաթ-



ուան մը մէջ ամբողջապէս կը վճարէ :

Աղան ոչինչ պատասխանեց . անմիջապէս մեծ եղբօրն հեռագրեց որ վերջին շոգեհանաւով իջնէ : Կէս օրին մօտ մեծ եղբայրն եկաւ , խորհուրդ ըրին եւ Սահակը ներս կանչելով ըսին թէ Եփեմարնին ըլլալով բան մը չէին ըսեր ըրածին համար , բայց կը պահանջէին չորս հարիւր ոսկւոյ պարտամուրհակ մը , վճարելի իրենց հրամանին , երբ ուզեն : Սահակ աղա գրեց եւ ստորագրեց պարտամուրհակը :

Պարտամուրհակը ձեռքերնին ունենալով աղաները վստահ եղան որ գործակատարն այլ եւս չէր կրնար պարտքն ուրանալ :

Դեռ չէին ձանչեր այդ դժբաղդ բայց ազնիւ անձը . սպառնացան յանձնել զինքն ոստիկանութեան իբր « գող » եթէ յապահովութիւն պարտքին տունը չդարձնէ իրենց վրայ : — Սահակ դառն ժպիտ մը ունեցաւ :

— Ինչպէս կ'ուզէք , այնպէս ըլլայ , ըսաւ : Նոյն օրն անմիջապէս վաճառման պայմաններն ի գործ դրուեցան եւ տունն այլ եւս աղաներուն սեփականութիւնն էր . եթէ չուտով վճարէր պարտքը խոստում տրուեցաւ իրեն վերադարձնել տունը :

Այս գործողութենէ վերջ ,

— Խեղճեղ աշխատի էր ըսին , եւ ճամբեցին :

Երկու ամիս պայմանաժամ որոշուեցաւ տունէն ելնելու եթէ վարձքը վճարելու անկարող լինի :

## Բ.

Պէպէքի եւ Հիսարի միջեւ բլրակի մը վրայ կառուցուած է « Ռոպէրթ վարժարանը » : Այդ դպրոցը կ'աշակերտէր Սահակ աղայի որդին Լեւոնը , գեղեցիկ , աշխոյժ , սիրուն տղայ մը , գրեթէ տասն եւ չորս տարեկան : Այդ վարժարանի գիշերօթիկ աշակերտք իրաւունք ունին իրենց տուները երթալ ամէն շաբաթ երեկոյները : Լեւոն , որպէս զի իւր աշխատութիւնները չընդհատին , այս իրաւունքէն ամիսը մի անգամ օգուտ կը քաղէր : Դպրոցը կը գտնուէր երբ պատահեցան հօրը դժբաղդութիւնները : Տուն գնաց երեք շաբաթ վերջ . ոչինչ գի-

տէր , բայց նշմարեց ծնողացը տխրութիւնը եւ զգաց թէ մեծ վիշտ մը կը տանջէր զանոնք : Քրոջն հարցուց , նա եւս ոչինչ գիտէր : Կիրակի երեկոյին երբ Լեւոն մեկնեցաւ տունէն , սիրտը կտորած էր : Տրտում տխուր անցուց ամբողջ շաբաթն եւ երբ լրացաւ շաբաթն , այլ եւս չէր կարող համբերել , տուն գնաց . այս անգամ մի քիչ աւելի զուարթ տեսաւ ծնողքն : Արդարեւ Սահակ աղա կը յուսար մօտաւոր ժամանակի մէջ կարգադրութիւններ ընել : Լեւոն դպրոց վերադարձաւ սիրտն աւելի հանգստած : Շարունակեց ամիսը մի անգամ տուն գնալ : Միշտ տունը խառնակ վիճակի մէջ կը գտնէր , եւ վրդովեալ կը մնար :

Բարեկենդանէն շաբաթ մը առաջ , կիրակի առաւօտ մը օդը գեղեցիկ էր , ձմրան պայծառ կիրակի մը : Առջի օրը շատ ձիւնած էր . ձիւնաթաղ էր ամբողջ Պոլիս : Ամէն ոք հրճուանք կ'զգայ պտըտելու այդպիսի եղանակի մը : Լեւոն մի քանի ընկերաց հետ մեկնեցաւ դպրոցէն , երեկոյին վերադառնալու որոշմամբ : Խաղալով ձիւնի հետ եւ զիրար ձիւնակոծելով , ցատկուտելով սկիւռի պէս , իջան Պէպէք եւ մտան շոգեհանաւ : Կամուրջէն Լեւոն ուղղակի Բերա գնաց եւ երբ կը մտնէր Թառլա - Պաշի , իրենց տան փողոցն , յանկարծ կանգ առաւ ապշած : Բաց էին իրենց տան դռներն , որոց առջեւ կայնած էին կոլու լծուած երկու կառքեր յորս կը զետեղէին կահ կարասիներն : Շուարած , Լեւոն կամաց կամաց կը քալէր . երբ դռնէն ներս մտաւ մայրը տեսաւ , որոյ աչքերն ուռած էին , այնքան լացած էր :

— Լեւոն , ինչո՞ւ եկար , եղաւ մօրն առաջին հարցումը , վասն զի յաջորդ շաբաթը կ'սպասէին նմա :

— Այո ի՞նչ է , հարցուց Լեւոն :

— Տղաս , տունէն կ'եկնենք , պատասխանեց մայրն , աչքերուն տանելով թաշկինակը : — Քոյրն ալ շատ արտասուած կը թուէր : Լեւոն գնաց հօրը ձեռքը պահեցաւ . հայրը տրտում տխուր կարգադրութիւններ կ'ընէր : Լեւոն շատ աւելի զարմացաւ տեսնելով թաղապետութեան երկու ֆալանգներ , թաղին Կեփեան եւ Բեփար : — Լեւոնի մայրը քանի մը բառով հասկցուց տղուն թէ հայրը պարտք ունէր աղաներուն



եւ տունը կը դրաւէին . հայրն ալ պարապն էր :

Արդարեւ անցած էին , չա՛տ չուտ անցած մի քանի ամիսներն զոր Սահակ աղայի նախկին տէրերը շնորհած էին նմա տունը կենսալու համար : Այդ միջոցին Սահակ աղա կարող չէր եղած ո՛չ գործ մը գտնել եւ ո՛չ ալ կարգադրութիւն մը ընել : Անունը աւարտաւորեալ էր , վարկը կոտրած : Աղաները տեսան թէ Սահակ ո՛չ տունէն կ'ելնէ ո՛չ վարձը կը վճարէ , եւ որովհետեւ իրենք ալ գործնական մարդիկ էին , դիմեցին օրինական միջոցներու եւ Բերայի թաղապետութեան ձեռք պարպել կուտային Սահակ աղայի տունը , ձմրան պայծառարեւ այդ կիրակին : — Բեռնակիրները կրելու շատ բան չունէին . մի քանի ամիսներէ հետէ Սահակ աղա կ'ապրեցնէր ընտանիքն եւ կը վճարէր մանր պարտքեր՝ ծախելով տան կահ կարասիները :

Իրիկուան դէմ ամէնքը դուրս ելան տունէն : Ամենէն աւելի դառնացած էր Սահակ աղայի կինը : Որքան յիշատակներ կապած էին իւր սիրտն այդ տան հետ : Հոն հարս գնացած էր , հոն ունեցած էր զաւակներն , հոն մեռած էր իւր մէկ տղան , հոն կը ձգէր սրտին բեկորները :

Գացին , մտան Բերայի նեղ , մութ աղտոտ փողոցներէն միոյն մէջ հին տուն մը : Նոյն օրն այդ տան մէջ վարձած էին սենեակ մը : Միեւնոյն տան մէջ կը բնակէին նաեւ ուրիշ երկու ընտանիքներ եւ տան տէրը միանգամայն , իւրաքանչիւրն ունենալով մէկ սենեակ :

Նրբ դռնէն ներս մտան առաջին գագուսնին նողկանք եղաւ . ծանր հոտ մը կամ չար եւս ծանր հոտեր կային : Մէկ երկու տեղ կերակուր կ'եփուէր , հոտն ամէն կողմ բռնած էր : Հոտ ձէթի , հոտ իւղի , հոտ ձկան , ուրիշ հոտեր , խառն ածուխի մուխի հետ : Խեղճերն հասկցան թէ ինչ է աղքատութիւնը : Տեղաւորեցին կարասիները , քիչ մը կրակ պատրաստեցին , զրին պղնձ փոքր կրակարանին մէջ , բոլորեցան չորս կողմը : Սահակ աղայի կինը պատառ մը ուտելիք պատրաստեց , կերան : Գիշերն Աբրահամ աղա եկաւ այցելութեան . մխիթարանաց մի քանի խօսքեր ըրաւ . նստեցաւ մի քիչ . հիւրը գնաց , անկողիները

տեղաւորեցին եւ պառկեցան : — Այդ երեկոյին Լեւոն չէր վերադարձած դպրոց :

Բարեկենդանն անցաւ , բոլորեցան նաեւ մեծ պահքին առաջին շաբաթներն եւ Լեւոն միշտ տունը կը մնար : Պատճառը պարզ էր . փետրուար ամսոյ վերջ պէտք էր վճարել վեցամսեայ թոշակն , անգլիական քսան ոսկի . ի հարկէ Սահակ աղա չէր կարող այդ վճարումն ընել եւ խեղճ տղան տունը կը մնար :

Նիթէ եսականութիւնը ինէր մարդկային սրտի միակ բնածին զգացումը , պիտի նմանէր մարդկութիւնը այն փոքր , վտիտ , արուգ տունկերու ոյք կը բուսին մրկակոծ ապառաժներու վրայ . բայց մարդու սիրտն , օթեւան տուրը զգացմանց , մանաւանդ գթութեան եւ ներողութեան ոգւոյն , կ'աճի կ'ուճանայ սիւսեղով իւր շուրջ կենսաբոյր դալարութիւն : Այդ ագնիւ ոգին ունէր Կարնեցի Սինայեան մահտեսի Կարապետ էֆէնտին : Նիթէ գաւառացիք շատ տագամ կ'ատեն զիրար ի խորոց սրտի , սակայն եւ յաճախ ցոյց կուտան գուրգուրանքի սիրտ մը իրենց հայրենակցաց նկատմամբ : Այդ կարգի գաւառացիներէն էր Սինայեան էֆէնտին : Նրկար ժամանակէ հետէ Պոլիս գաղթած և անդ հաստատուած վերջնապէս , բայց չէր մոռցած իւր երկիրն և իւր հայրենակիցներն : Լսելով Սահակ աղայի դժբաղդութիւնները , շատ ցաւած էր : Սահակ աղա ինքն ալ կարնեցի էր , տղայ հասակին մէջ Պոլիս եկած եւ անդ հաստատուած : Կարապետ էֆէնտի նեղացաւ ըսելով նաեւ որ իւր հայրենակիցին զաւակը հարկադրուած էր դպրոց չգնալ : Կարապետ էֆէնտի որդին Մկրտիչը շատ անգամ դովեստիւք խօսած էր հօրը Լեւոնի մասին : Մկրտիչ նախկին աշակերտ էր Ռոպէրթ վարժարանի եւ յարաբերութեան մէջ կը գտնուէր դպրոցի ուսուցիչներու հետ , յորոց լսած էր Լեւոնի դովեստներն :

Սահակ աղա շատ անգամ կ'այցելէր Կարապետ էֆէնտի , բայց դադրեցուցած էր իւր այցելութիւններն յորմէ հետէ դժբաղդութիւններ ունեցաւ : Մեծ պահքի մէջ Կարապետ էֆէնտի օր մը ճանապարհին հանդիպեցաւ Սահակ աղային եւ տղուն վրայ խօսելով խոստացաւ նորա պաշտպան լինիլ եւ դպրոցի ծախքերն հոգալ : Նոյն



երեկոյին Լեւոն հօրն հետ դնաց Կարապետ էֆէնտիի տունը շնորհակալ ըլլալու : Լեւոն թէպէտ տղայ բայց Ռոպէրթ դպրոցի մէջ իւր անձնասիրական զգացումները զարգացած էին շատ կանուխ : Բաւական վերաբերւած էր որ ուրիշին ողորմութեամբը պիտի յառաջանար . բայց ի՞նչ կրնար ընել : Ուսման անյադ տենչ ունէր եւ չէր կարող մերժել առաջարկն այն ազնիւ անձին ում արդէն ի սրտէ երախտապարտ էր : Նոյն գիշերը տունն էր նաեւ Սինայեանի որդին Մկրտիչը . երիտասարդ մը, առողջ կորովի, երկայնահասակ, ուրախ զուարթ, բայց ծանր : Մկրտիչ մի քիչ խօսակցեցաւ Լեւոնի հետ դպրոցի մասին, ինչպէս սովոր են խօսիլ դպրոցներու նախկին աշակերտք նոր աշակերտաց հետ :

Կարապետ էֆէնտին ալ քաջալերականներ կարգաց եւ ըսաւ թէ Աստուած մեծ է, ողորմութիւնն անսպառ է . Լեւոնի վերջն ալ լաւ պիտի լինի, հօրը մօրը ծերութեանը գաւազանը պիտի ըլլայ :

Յաջորդ օրը Սինայեանի գործակատարն Լեւոնը կը տանէր Ռոպէրթ դպրոցը, կը վճարէր վեց ամսականը եւ Լեւոն կը շարունակէր իւր դասերն :

Այդ օրէն կերպարանաւորիս եղած էր Լեւոն : Իւր ուրախ զուարթ դէմքը ծանրախոհ էր այլ ևս, զի կեանքի մէջ մտած էր ինքն : Նրբեք չէին լինել աներեւոյթ իւր աչքերէ հայրն իւզոտած հին զգեստներով, կորաքամակ եղած, անպատիւ եւ աղքատ : Խեղճ մայրն որ օրն ի բուն կ'աշխատէր, կար կը կարէր ապրելու համար, խեղդամահ կը լինէր խոհանոցի մուխին ու հոտերուն մէջ : Քոյրը, տասը տարեկան եւ արդէն դժգոհը, Հարկ էր չարաչար աշխատիլ և փրկել ընտանիքն : Լեւոն աշխատեցաւ : Անցան չորս տարիներ, աւարտեց նա դպրոցական ընթացքն, լինելով մին առաջին կարգի վկայեալ աշակերտաց : Բայց այն օրն յորում վերջնական կերպով հրաժարական տուաւ դպրոցին, շատ տրտում եկաւ տուն :

Սակայն նախախնամութիւնն որ Սինայեանի անձնաւորութեան ներքեւ կը հսկէր Լեւոնի վրայ, շուտ օգնութեան հասաւ : Սինայեան վաղուց մտածած էր թէ կարելի չէր այդ տղան սրբապ թողուլ երբ ելնէր դպրոցէն : Այս նպատակաւ Կարապետ էֆ

յանձնարարած էր իւր զաւկին որ գործ մը գտնէ Լեւոնի : Մկրտիչ Սինայեան շատ հետամուտ եղած էր որ Լեւոնը Պանք Օթօմանը մտնէ . շնորհիւ իւր յարաբերութեան, Մկրտիչ էֆէնտի Սինայեան յաջողած էր Լեւոնի համար պաշտօն մը գտնել Պանք Օթօմանի մէջ : Յուլիս հինգշաբթին երբ աւարտեցաւ Ռոպէրթ դպրոցի սարգեւաբաշխութեան հանդէսն, Լեւոն վերապառնալով Բերա իւր առաջին պարտականութիւնն համարեց երթալ Սինայեան էֆէնտիի յայտնելու իւր երախտադիտութեան զգացումներն : Սինայեան բաւական քաջալերութիւններ տալէ վերջ աւետեց բարի լուրն եւ յայտնեց թէ երկուշաբթի օր Մկրտիչին հետ Պանք Օթօման երթալով կը մտնէ իւր գործին :

Ո՛հ, այն օրն, այն անմոռանալի օրն երբ վերջացաւ ամիսն եւ Լեւոն ստացաւ իւր առաջին ամսականն, որ ըստ աւանդութեան վեց օսմանեան ոսկի է : Երեկոյին վերադառնալով տուն անմիջապէս այդ գումարն յանձնեց հօրն : Ի՞նչ գոհունակութիւն այդ խեղճ ընտանեաց մէջ : Բոլորեցան ամէնքը միասին . կ'օրհնէին Սինայեանի ընտանիքն : Մոռցան անցեալն, մոռցան իրենց թշուառութիւններն :

Ձենք ուզեր մանրամասնօրէն պատմել թէ որպիսի տոկուն աշխատութեամբ Լեւոն յաջողեցաւ երկու տարիներու մէջ պատրաստել իրեն լաւ վիճակ մը : Թողած էին այն հին խեղճ տունը . այժմ Լեւոն կը բռնակէր իւր ծնողաց հետ գեղեցիկ փոքր տուն մը, եւ հանգիստ կ'ապրէին :

Անշուշտ ներքի էր երջանիկ համարել Լեւոնն, ինքն ալ այնպէս կը կարծէր, եւ սակայն երիտասարդի մը սիրտն կարող է հանդարտ կենալ : Լեւոնի սիրտը կարօտ մը ունէր . ի՞նչ բանի . ինքն ալ չէր գիտեր : Անտարակոյս բաւական ատեն պիտի անդիտանար այդ կարօտն եթէ Սինայեանի տան մէջ իւր սիրտը չտրոփէր տեսնելով աղջիկ մը զոր ճանչցաւ օրիորդ Ֆօթիւնէ անուամբ : Օրիորդն աւելի կորովի էր քան փափուկ, աւելի խրոխտ էր քան հրեշտակային . խորին տպաւորութիւն մը թողուց նա Լեւոնի փափուկ, կոյս, դիւրագործ սրտին վրայ : Հաւանօրէն պատկերահան մը պիտի չընտրէր օրիորդ Ֆօթիւնէ գեղեցկութեան կա-



տարեալ օրինակ մը, բայց քանի որ մարդկութիւնն գոյութիւն ունի, ըստած է թէ սէրը կոյր է: Լեւոն կը սիրէր Ֆօթիւնէն:

Լեւոնի սրտին մեծագոյն հրճուանքն էր հանդիպել Սինայեանի տունը այդ աղջկան: Բայց շուտով սիրտը դառնացաւ. Ֆօթիւնէն անտարբեր կը թուէր իրեն համար և իւր բոլոր հրապոյրները կը պարզէր Սինայեանի Մկրտիչի համար: Մկրտիչ Սինայեան կը սիրէր Ֆօթիւնէն: Լեւոն կասկածոտ եւ անխորձ աշխարհքի մէջ, չգիտանեցաւ հաստատական պատասխան տալ: Այդ օրէն Լեւոն ինքզինքը թշուառ կը համարէր: Քսան տարեկան երիտասարդ մը միշտ դիւրամետ է թշուառ համարելու զանձն: Ի՞նչ պիտի ընէր: Տեղի տա՞լ թէ մարտնչիլ: — Ո՛չ մին ոչ միւսն կարող էր ընել: Ինչո՞ւ զիրենք ազատեցին Սինայեանը թշուառութենէ, կը հարցնէր ինքնին: Մարտնչի՞լ. ինքն որ կեանքի կռիւներու վարժած էր, չէր վարաներ այդ կռուոյն մէջ մտնել. ո՞ր դիտէ, « կին փոփոխամիտ է », թերեւս յաղթանակին իրեն մնար: Բայց մարտնչի՞լ այն անձին դէմ որ առանց ո՛ր եւ է շահու ակնկալութեան փրկած էր զինքն ու ծնոյն, ահաւելի կը թուէր իրեն: Այդ օրն ըմբռնեց թէ մարդուս համար մեծ դժբաղդութիւն մը կրնայ համարուիլ ուրիշին երախտապարտ մնալու պարտականութիւնն: Շղթայապիրկ եղած էր. չղթայն թէպէտ բարոյական էր, բայց եւ այնպէս չղթայ էր:

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ  
(Շարահանէի)

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՕՐԱԳԻՐ

ՅԻ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար. նախորդ թուէն)

Թայֆօ օր քան զոր սկսելով ծաւալիլ, հարկ եղաւ հնարել մի այնպէս մեքենայ որ ժամը գոնէ կարենար 400 թիւ տպագրել:

Քէօնիկի մեքենան որ հնարուեցաւ 1812 ին խնդիրը լուծեց, բայց երկու տարուան կարօտ էր շինուելու. միւս կողմանէ տպագրիչները յուզուեցան կարծելով թէ անգործ պիտի մնան. վերջապէս Թայֆօ շոգեշարժ մեքենայով տպագրուեցաւ առաջին անգամ 1814 նոյեմբեր 29 ին, եւ մէկ ժամու մէջ 1,100 օրինակ:

Թայֆօի կեանքին հետաքրքրաշարժ մի պարագան տեղի ունեցաւ 1840 ին: Մայիս 15 թուականաւ թղթակիցը Օ. Քէյկ նամակի մը մէջ մի դաւադրութեան մանրամասնութիւնները կուտար. դաւադիրներու նպատակն էր օտար սեղանաւորներէն միւլիոն մը ոսկի կլթել. արդէն 10 հազար ոսկի լսելը էին: Թղթակցին ալ նպատակն էր այդ անարդ դաւը խորտակել անոր յատկազրծը երեւան հանելով: Ալան Ջըրճ Պօլ, չորեքտասան դաւադիրներէն մին՝ դատ բացաւ Թայֆօի դէմ զոր ամբաստանեց իբր զրպարտիչ: Դատին ելքն դործնականապէս Թայֆօի նպատակը եղաւ, բայց որովհետեւ դատական ծախքերը չատ ծանր էին հանդանոցութիւն մը բացուեցաւ որմէ ստկայն Թայֆօի տնօրէնը օգտիլ չհանդուրժեցին. ասոր վրայ յիշատակարան մը գրուեցաւ Արքունի Սակարանին սրահին եւ Թայֆօի դրասենեկին մէջ, ներքող նորա հայրենասիրական գովելի դործին, երկու ալ թոշակ սահմանուեցաւ Օքսֆորտի եւ Գէմրիճի համալսարանները ի նպաստ երկու ուսանողներու. մինչեւ հիմա այդ թոշակները կան եւ կ'ըսուին « Թայֆօի թոշակներ »: Հայրը 1812 նոյեմբեր 16 ին մեռած էր 74 տարեկան, ինքն ալ ճօն Ուօլթըր մեռաւ 1847 ին 72 տարեկան հասակին մէջ: Չէ թէ միայն մեծ լրագիր մ'էր հիմնած, այլ նաեւ ստացած մեծ համբաւ եւ մեծ հարստութիւն: Պէրքլայրի եւ յետոյ Նօթթիւնկէմի երեսփոխան եղած էր: Երրորդ Ուօլթըր մեծ հարստութեան մը հետ ժառանգեց մի մեծ պատասխանատուութիւն, քանզի թերթին յաջողութիւնը պարտք կը դնէր որ անդադար կատարելագործէր զայն: Քէօնիկի մեքենային վրայ փոփոխութիւններ եղան բայց անբաւական էին. Արլիէթ անուն ճարտարագործ մը ուրիշ դաւադարի վրայ մեքենայ մը յօրինեց որ ժամանակ մը գործածուեցաւ. այդ մեքենային վրայ գրերը



չարած էին ուղղահայեաց գլաններու վրայ որոնք մի ժամու մէջ հազար անգամ դառնալով 8,000 թերթ կը տպէին: 1851ի արուեստահանդէսին այս մեքենան ամենուն ուշադրութիւնը կը գրաւէր. մի եւ նոյն ատեն Հօէ անունով մի անձ նոր մեքենայ մը կը հնարէր ի Նիւ-Եօրք, որուն գերազանցութիւնը ճանչցուած է հիմա եւ կը գործածուի Սնդկոյ եւ Միացեալ-Նահանգաց մէջ: Ուօլթըրի խրախուսանօք Տէլ-լականսի Իտալացիին յաջողեցաւ Բաթէ Ժաշէ ըստած պինդ բաղադրութեան տախտակներ շինել եւ անով «Բէռլին»-ներ հանել: Նոր մեքենայով ժամը 12 հազար օրինակ կը տպուէր: Ետքը 1863 էն 1871 «Ուօլթըր մեքենան» (\*) հնարուեցաւ Մագ Տօնալ եւ Գորվըրլէյի ձեռքով: Մեծ պտուտակ մ'է սա չորս մղոն տարածութեամբ ծալուած երկար թղթով մը պատեալ: Այս թուղթը կէս ժամուան մէջ լրագիր կ'ըլլայ. պտուտակէն ինկնող թերթերը կը ծալուին եւ վաճառելու պատրաստ ձեւի մէջ կ'ըլլան. ժամը 15 հազար օրինակ կրնայ պատրաստուիլ այս եղանակաւ. ամէն գիշեր 10 թօն ծանրութիւն եւ 160 մղոն երկայնութիւն ունեցող թուղթ լրագրի կը վերածուի:

Թայֆի հիմնադիրը եւ տնօրէնը միշտ ամենայն խնամօք ջանացեր են որ լրագիրը անկախ ըլլայ ամէն պարագայի մէջ եւ բռնաւ ազդեցութեան ներքեւ չիյնայ. բայց անկախութեան յենարանը եղած է հայրենասիրութիւն: Միշտ ջանացեր են հասկընալ թէ ի'նչ է երկրին կամ ժողովրդեան փափաքը եւ թէ փափաքուածը օգտակար է: Նոր սկիած ատեն Թայֆ ողի ի բռին կը դիմադրէր գերեվաճառութեան, ուստի եւ շատ օժանդակեց այդ մարդանախատ առեւտուրին ջնջմանը:

Ուօլթըրները տէր միանգամայն տնօրէն էին Թայֆի, բայց յետոյ ուղղութիւնը անցաւ Սթէրլին Պարն, Տըլան (1841-1877) եւ

(\*) «Թայմը» 10 հատ ունի Ուօլթըր մեքենայէն, «Տէյլն Նիւզ» 8 հատ, «Նիւ Եօրք Թայմը» 4, «Աքօնմէն» 3, «Կլասկով Նիւս» 2, Վիլհէմայի «Նայէ Զրայէ Բրէս» 2 հատ ունի, «Միսսուրի Ռէ-բլայիքս» եւ «Մակտեպուրկ Չայթուէկ» մէկ հատ. այս մեքենային հատը կ'արժէ 3,000 անգլ. ոսկի: Աւելի սուղ 5,000 ոսկի կը ծախուի Հօէի սիլինարով մեքենան:

Չէնրի անուն անձանց. 1884 էն ի վեր Թայֆի տնօրէնն է Պ. Ջ. Պըքլ: Տնօրէններուն ամէնէն նշանաւորն եղաւ Տըլէն: Լոնտոնի լրագրութիւնը չէ միայն այսօր հանրային կարծեաց արտայայտութիւնը յ'Անգլիա. գաւառական մամուլն կը մրցի անոր հետ. բայց Թայֆի դիրքը բոլորովին եղական է աշխարհիս մէջ. երեսուն տարի յառաջ տեսէր ինչպէս կը շնորհաւորէր զնա Պ. Պուլվէ Լայթըն Խորհրդարանին մէջ. — «Եթէ պէտք ըլլայ անգլիական բաղադրութեան յիշատակարան մը աւանդել ապագային՝ պիտի նախընտրէի ոչ մեր Տոքթըրը, ոչ մեր երկաթուղիները, ոչ հանրական հաստատութիւններն, ոչ ալ այս պալատը ուր կը համախմբինք, այլ Թայֆի հաւաքածոյ մը »:

Դրամը կարեւորութիւն չ'ունի անգլիական լրագիրներուն համար, մանաւանդ արտասովոր պարագայից մէջ: Կառավարութիւնները ելմտացոյցի օրէնքներուն ենթակայ՝ չեն կրնար մրցիլ անոնց հետ. ո՞ր կառավարութիւն կ'արտօնէ իւր ներկայացուցիչները որպէս զի մեծ գումարներ ծախսեն պետական ճառք մը հեռագրելու համար. բայց անգլիական թերթերու թղթակիցք ամէն անգամին կը վճարեն 3-800 եւ աւելի ոսկիներ, եւ հեռագրատուներէն եւ դեսպաններէն, զօրապետներէն կամ հիւպատոսներէն աւելի կանուխ լուր տալու առաւելութիւնը կ'ունենան:

Քանի մը տարիներ յառաջ լրագիրը հանրային կարծեաց վարիչները չէին, այլ միայն անոր թարգմանն էին կամ արտայայտութիւնը: Բայց մամուլն կատարեալ անկախութեան մը հասնելէն ի վեր հանրային կարծեաց առաջնորդութեան դերը ստանձնած է, ուր երբ մարդ տեսնէ անոր գլուխը կեցող նշանաւոր մարդոց պատկանելի խումբը, ոչ ոք կրնայ չճանչնել թէ ուհահորդ եւ լուսատուն է նա հանրային կարծիքին: Մեծ լրագիրներէն միոյն մէջ գրիչ բռնել կարենալու համար, առաջին դիրք մը գրաւած ըլլալ պէտք է արդէն գրական, բաղադրական եւ ընկերական մրցումներու մէջ. պէտք է սրբազիրներու սրբազիրն եւ մեծն ի մեծանց ըլլալ: Խորհրդարանը տարուած ամէն խնդիր արդէն լրագիրներու մէջ ընդունուած եւ լուծուած է: Մամուլը խնդիրն



ամէն կերպարանքներով ուսումնասիրելը գործ մը ըրած է իրեն . եւ խորհրդարանական վիճաբանութեանց ամէն ալ գլխաւոր յօդուածներու կրկնութիւններն են : Մայրաքաղաքին եւ գաւառներու մամլոյն ազդեցութիւնը մեծ է քաղաքական մարդուն վրայ . ազդարար եւ լուսաւորիչն է նա , մինչդեռ լրագիրները ընթերցողաց միտքը կը հրահանդեն , կը մարզեն եւ կը պատրաստեն քաղաքական պայքարներու համար : Մամուլն է որ արքունեաց , խորհրդարանաց , դեսպանութեանց ամէն գաղտնիքները խափանեց . «չիք ինչ ծածուկ որ ոչ յայտնեսցի» . արդոսի աչքը ունի մամուլը ամէն տեղ , ամէն անկիւն :

Հանրային կարծեաց առաջնորդներն մայրաքաղաքին թերթերը չեն միայն . մէն մի քաղաք ունի իւր օրական թերթերն որք ըստ օրինակի Լօնտօնի թերթերուն կը վարուին , յարգ եւ ազդեցութիւն ունին : Գաւառական մամուլը հարուստ է եւ Լօնտօնի մամլոյն չափ գործերու տեղեակ : Մանչէսթըրի «Կոարքիս», օրինակի համար , տարին մէկ միլիոն ֆրանք չափ ունի եւ Թայֆի հետ կը մրցի :

Հրապարակաւիքը գտած են միշտ ամենէն բարձր դասերու եւ ակումբներու մէջ մեծ յարգանք . երկրին մեծամեծները կը հրաւիրեն զանոնք գիւղերը եւ քաղաքները եւ կը հիւրընկալեն . յաճախ անոնց խորհուրդ կը հարցուի եւ խորհուրդները կը գործադրուին : Անգլիացի հրապարակագիրն անկողմնակալ է , անկախ եւ դուն ուրեք կը ներգործեն վրան բարեկամական զգացումներ կամ առանձնական հաշիւներ :

Մամլոյ վրայ կապանք չկայ Անգլիոյ մէջ . ազատութիւնը կատարեալ է հոն եւ տպագրական օրէնքը գոյութիւն չունի . ամէն մարդ ազատ է լրագիր հրատարակելու , ոչ ոք պարտ կը դնէ քաղաքացւոյն վրայ արտօնութիւն խնդրելու տեղական իշխանութեանէն կամ թէ կանխական զեկուցում մը հաղորդելու անօր , նոյն իսկ եթէ քաղաքական լրագիր մը ըլլայ հրատարակելի թերթի . բայց եթէ հրատարակիչ մը ելնէ չարաչար գործածէ այդ ազատութիւնը , նոյն իսկ բարոյականը խորտեցունող ճշմարտութեան

թիւններ յայտնած ատեն ինչպէս եղաւ Բէլ Մէլ Կալէթի համար անցեալ տարի՝ անպատիժ չմնար . պետութեան կամ վեհապետին դէմ յարձակողական եւ նախատական գրուածներն ալ երբէք անպատիժ չեն թողուիր . լրագրապետը այդպիսի պարագայից մէջ դատաստանի կ'ենթարկուի , եւ դատարանը զեղծման աստիճանին համեմատ դադարում , տուգանք եւ կամ պատիժ կը տնօրինէ յանցաւորին դէմ : Մէն մի լրագրոյ համար մի բէննի տուրք մը սահմանուած է , բայց այդ ալ ի՛նչ տուրք է որ պարտաւորեալ չեն վճարելու լրագրապետք եւ սակայն յօժարակամ կը վճարեն , այո՛ , քանզի դրօշմ ունեցող թերթերը թղթատարի ծախք աղատ են եւ այսպէս մի եւ նոյն թերթը կրնայ ձեռքէ ձեռք անցնիլ , քաղաքէ քաղաք փոխադրուիլ եւ շատերէ կարդացուիլ :

Լօնտօնի մէջ աւելի զգալի է մամլոյ ազատութիւնը , բայց այդ ազատութեամբ չզեղծանիր մամուլը : Տպագրական դատերը միայն փոքր լրագիրներու դէմ կը բացուին եւ փոքր թերթի մը համար դատ մը յանձնարարական մ'է շատ անգամ : Մամլոյ ազատութեան հարկը հետեւեալ խօսքերով կը բացատրէ Պէքսըն . « Մամուլը քննութեան սեղմիչ իշխանութեան ենթարկելը կը նշանակէ մի մարդու նախապաշարմանց ենթարկել հանրային կարծիքը , եւ այդ մարդը բռնաւոր կամ անսխալ դատաւոր մը ձանձել բոլոր վիճաբանեալ կէտերու վրայ » : Լօնտօնի մէջ հարկւրաւոր լրագիրներ կան եւ հետեւեալ կերպով դատակարգեալ են .

— Մեծ ու փոքր ամենօրեայ թերթք .

— Մասնաւոր օրագիրք , տեղական , զաւեշտական , պատկերազարդ եւ աշխարհիկ թերթեր .

Հանդէսք եւ Շտեմարանք (Magazine) .

Ոչ - դատակարգեալ հրատարակութիւնք :

Ամենօրեայ եւ գլխաւորապէս թերթերն են Թայֆը , Տէյլթ Թէլէգրաֆ , Սթանսթար , Տէյլթ Նիւս , Մօնիթօր , Տէյլթ Գրեմիլ , Բէլ Տէլ Կալէթ (\*), Սէնդ Ճէյմս Կալէթ , Կլոյ , Էտ :

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

(Շարունակելէ)

(\*) Դադարեցաւ այս տարի պահ մը , իրական բայց գայթակղական մի քանի յօդուածներուն համար :



## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԷ

ԱՐԳԻՒՆՔԸ

ՆԻՒ - ԵՈՐԳ, 7 Յնդր. 1886

Մասիս ընթերցողներուն մէջ թերեւս քիչեր գիտեն թէ ինչ է կրօնական արթնութիւնն, որուն մեծ կարեւորութիւն կ'ընծայեն բողոքական աղանդներէն ոմանք, մանաւանդ Մէթոտիսդ կոչեցեալ աղանդաւորք: Յաճախ յատուկ ժողովներ կ'ընեն, եւ տարօրինակ միջոցներով կ'աշխատին կրօնական արթնութիւն յառաջ բերելու, եւ դիւրագրած ու տգէտ արանց եւ կանանց մտքերը կը յուզեն այնպէս որ երբեմն ամբողջ ընտանիքներու անդամներ չափազանց եռանդեամբ կը մտնին, եւ մինչ իրենց հոգիները դժուար բոցերէն աղատելու ետեւէ կ'ըլլան, կը կորսուցնուն իրենց խելքն եւ միտքը: Բողոքական աղանդներու արթնութեան ժողովները չեն շատ անգամ արդիւնք ճշմարիտ կրօնական զգացմանց անոնց որ իրօք տեսնելով մեղաց տգեղութիւնը կը թողուն վատթար կեանք, եւ կ'ուխտեն ապրիլ Քրիստոնէի վայելուչ կերպով: Այս ժողովները շատ անգամ չեն նաեւ անկեղծ ապաշխարողներու ժողովներ, ինչպէս կ'ուզեն հաւատացունել մեղեանդ քարոզիչք ոմանք եւ երբեմն կրօնական թերթեր: Կրօնական արթնութեան փափաքողը Հոգւոյն Սրբոյ սրբացուցիչ եւ նորոգիչ ազդեցութենէն աւելի ուրիշ ազդեցութիւններու եւ միջոցներու կը հաւատան. ուստի յատկապէս կը պատրաստեն եւ կամ դուրսէն կը հրաւիրեն այնպիսի անձեր, որ հասարակ ժողովողեան խօսելու եւ անոնց միտքերն յուզելու մասնաւոր ձիրք ունին: Այսպիսի անձինք կ'ենեն հասարակ ժողովողեան կը նկարագրեն Միջին դարուց արժանի ճարտասանութեամբ դժոխքի արհաւիրքն եւ սոսկումներն, եւ արքայութեան անձառելի փառքն, կ'աղօթեն եռանդով, եւ որպէս թէ Աստուծոյ հետ մարտնչելով կ'իջեցունեն Սուրբ Հոգին ան-

դարձ մեղաւորաց վրայ, որոցմէ շատեր նոյնհետայն դարձի կուգան, կը սարսռին աներեւոյթ զօրութենէ մը որ կ'ազդէ անոնց, եւ աղօթքի ժողովի մէջ ոտքի վրայ ելնելով կը պատմեն իրենց անցեալ կեանքը, թէ ինչպէս սատանայի գերի էին, որպիսի մեղքեր կը գործէին, եւ այն պահուն իրենց աշուրները բացուած են, եւ իրենք կը տեսնեն անդունդն որ իրենց առջեւ բացուած էր, բայց Քրիստոսի շնորհքով փրկուած են, եւ վերստին ծնած են յորդեգրութիւն երկնաւոր կեանց: Արթնութեան ժողովներու յատուկ երգեր գրուած եւ տպուած կան, եւ կ'երգուին այնպիսի զգացմամբ եւ սրտաշարժ եղանակաւ որ արդարեւ քարոզիչներու խօսքերէն աւելի ազդեցութիւն կ'ընեն: Այդպիսի ժողովներու մէջ որպէս թէ իբրեւ խոստովանութիւն կը պատմուին այնպիսի զգուցիլ բաներ զորս պարկեշտ մարդ մը չուզէր լսել մինչեւ իսկ փողոցներու մէջ: Արանց խոստովանութեանց կը յաջորդեն կանանց խոստովանութիւններ, եւ երիտասարդաց խոստովանութեանց՝ աղկանց խոստովանութիւններ: Յորդորներ, աղօթքներ, երգեր եւ խոստովանութիւններ ու փորձառութեանց պատմութիւններ ժամեր կը տեսնեն: Անգիղ մեղաւորներու յատուկ թախանձանք եւ պաղատանք կ'ըլլան որ զիրենք Քրիստոսի տան եւ սատանայի ճիրաններէն ազատին: Հայ բարեկամ մը ներկայ գտնուած է անգամ մը այսպիսի ժողովի մը, եւ մեղեանդ այրերու եւ կիներու թախանձանքէն այնչափ նեղուած է որ օձիքն անոնց ձեռքէն ազատելու համար ըսած է թէ այն պահուն ինքզինք յանձնած է Քրիստոսի: Ասոր վրայ հարիւրաւոր ձայներ դուռացած են. «Փա՛ռք, Ալէլուիա, ահա հոգի մ'ալ ազատեցաւ»: Ահա այսպիսի արթնութեան ժողովի մը մէջ մէկ ընտանիքի չորս անդամներ յիմարացած են, եւ այս աւուր Ռօբըլ քաղաքի իննօրն նահանգին Տանվիլ աւանէն ընդունած է հետեւեալ նամակը.

«Տանվիլէն ութ մղոն դէպ ի հիւսիս Պըլաունդ Գառնիլի կոչուած տեղը կը բռնակէր տարիներէ ի վեր Խալէֆէթներու (Քրիստոսի ի մօտոյ գալստեան հաւատացողներու) ժողովուրդ մը. Այս ժողովը-



դեան մէջ նշանաւոր էր Ուօլֆօթ Ալլէն կոչուած յաջող երկրագործ մը որ մեռաւ երկու տարի առաջ թողնելով իւր կալուածքն իւր երկու որդւոց, ճօրճի եւ Հէպէրի, որոց առաջինն էր երեսուն երկու եւ երկրորդն երեսուն տարեկան, եւ իւր դստեր Մարիին, որ էր քսան երկու տարեկան։ Որդիքն ամուսնացեալ էին եւ ունէին ընդարձակ ագարակներ, եւ երկուքն ալ հայր են երկուական զաւակաց։

Ալլէնի որդիք գոհ էին Էտվէնդիստներու վարդապետութենէն մինչեւ անցեալ դեկտ. ամսոյ չորսն երբ գացին Մէթոտիսդներու արթնութեան ժողովին որ տեղի կ'ունենար աւանին դպրոցի շէնքին մէջ։ Պատ. Ճօն Սուիչըր, յաղթանդամ անձ մը, կը նախագահէր ժողովին։ Պատուելին երեւելի է իբրեւ ակտիւ կարողացող, եւ փոխարացեալ բերանով կը ցատկէ կ'ենէ բեմը, եւ կը քալէ բեմին առջեւի նստարաններուն առջեւէն, եւ ինչպէս ինք կ'ըսէ, « Կը սարսէ մեղաւորները բերանաբաց դժոխքի վրայ, որպէս զի կարենան երկնից կլիմային յարգը ճանչնալ »։ Ալլէնի որդիք, կ'երեւէր թէ յուզեալ էին, եւ անոնցմէ մին ոտք ելաւ ըսելու թէ ինք հաւատացող էր Էտվէնդիստներու վարդապետութեան։ Պատ. Սուիչըր պատասխանեց մէկէն. « Կարդա՛ Աստուածաշունչը, քեզ կ'ըսեմ, կարդա՛ Աստուածաշունչը եւ պիտի տեսնես թէ ո՞ր կրօնքն է ճշմարիտ »։ Բոլոր ժողովին, որ կը բաղկանար աւելի քան հարիւր երկրագործներէ եւ անոնց ընտանիքներէ, մեծապէս ազդուած էր Պատ. Սուիչըրի քարոզութիւններէն եւ աղօթքներէն։ Ալլէնի որդիք անմիջապէս սկսան ուսումնասիրել Աստուածաշունչն, եւ իրենց ընթերցումը շարունակեցին սաստիկ եռանդեամբ այնպէս որ ագարակի գործերն երեսի վրայ թողուցին։ Շաբաթ մ'առաջ նշմարուեցաւ թէ այս մարդիկ խելայեղներու պէս կը շարժէին։ Շրջակայ տեղերը կը պտըտէին առանց նպատակի եւ ապշութեամբ, եւ որու որ հանդիպէին կը խօսէին Աստուածաշունչի վրայ։ Թեւ թեւի տուած ճանքուն բերանը կը կենային Սաղմոս երգելով եւ ապուշ ապուշ նայելով անցորդներուն վրայ։ Հէպէր սա յիմարական գաղափարը կը յայտնէր թէ ճօրճ Աստուած

էր, եւ ինքը մին յառաքելոց։ Երկու եղբարք ալ կրկին կրկին կը յայտարարէին թէ պատրաստ էին այլոց տալու իրենց ձիերը, սայլերն եւ ուրիշ գործիները, վասն զի իրենք էին Աստուծոյ ընտրելիներն, եւ այլ եւս պէտք չունէին աշխարհային բաներու։ Անցեալ շաբաթ գիշեր մը երկու եղբարք անյայտ եղան, եւ առաւօտուն դարձան յոգնած, անօթի եւ գունատ, եւ չէին կրնար գոհացուցիչ տեղեկութիւն տալ թէ գիշերն ուր գացած էին։ Անգամ մը երբ դրացի մը Հէպէրի վրայ գլխով անոր խնայատու տուաւ տուն երթալ եւ հանգչիլ, Հէպէր պատասխանեց. « Յիշեցեալս մարդիկ հանգստեան պէտք ունին, մեք յԱստուծոյ ծնեալքս հանգստեան պէտք չունինք. բոլոր ժամանակը կը վայելենք հանգիստ »։

Այս երկու խելայեղ եղբարք կը հաւատային թէ իրենք չէին ապրեր ի մարմնի, այլ Աստուծոյ զրկուած եւ կարգուած էին ուղղել մարդկութեան սխալները։ Վերջապէս երկուքն ալ մարդասպանութեան միտումներ ցուցունել սկսան։ Ասոնց կանայք ահ ու դողի մէջ ինկան, եւ դրացիներէն ոմանք յօժարակամ յանձն առին պահպանութիւն ընել որ արթնութեան զոհերը մեծ ոճիր մը չգործեն։ Կիրակի գիշեր ճօրճ Ալլէն փորձ ըրաւ պանիրի դանակով մը ըսպանել իւր կինն եւ զաւակները, վասն զի, ինչպէս ինք կ'ըսէ, « Աստուած ըսաւ ինձ զոհել զանոնք », բայց պահպանութիւն ընող երեք հզօր մարդիկ արգիլեցին զնա։ Հետեւեալ օրն հոս բերուեցաւ եւ Դատաւոր Իվանսի ատեանին առջեւ դատուեցաւ խելայեղ մտակորոյս։

Նոյն գիշեր Հէպէր Աղքինսոն անուն դրացւոյ մը ետեւէն վազեց իբր մղոն մը տեղ, բայց չկրցաւ հասնիլ անոր։ Կէս գիշերին մտաւ սենեակն ուր կը ընանային իւր որդիք։ Պահապանն ետեւէն գնաց որպէս զի խելայեղ մարդը փնտս մը չհասցունէ իւր որդւոց։ Յիմարը նայելով իւր զաւակաց երեսն ի վեր միմեայ. « Ո՛ր տղուն արիւնն իմ վրաս պիտի ըլլայ »։ Պահապանը սոսկաց անոր այս խօսքը լսելով, եւ բռնի հանեց զնա սենեկէն դուրս։ Երեքշաբթի օր Հէպէր եւս բերուեցաւ դատաւորին առջեւ իբրեւ մտակորոյս եւ վտանգաւոր խելագար։ Ասոնց քորը Մարի յիմարութեան



մեղմագոյն մէկ տեսակէն բռնուած է: Կը հաւատայ թէ ինք մայր է Աստուծոյ: Վաղը կամ միւս, որ սա ալ դատաւորի առջեւ պիտի հանուի: Տիկին Ալէն եւս, մայր այս երեք դժբաղդ անձանց, կորուսած է իւր խելքը: Իւր ժամանակին տմենամեծ մասը կ'անցունէ Աստուածաշունչի ընթերցմամբ, եւ յաճախ կ'ընէ անյարիր խօսքեր, եւ յիմարական յորդորներ:

Նշանաւոր բժիշկ մը կ'ըսէ թէ Պլաունդ Դաունչիքի բոլոր բնակիչք կրօնական չափազանց յուզման ենթարկուած են, եւ շատերու համար վախ կայ թէ Ալէնի որդւոց բախտակից պիտի ըլլան: Բժիշկը շատերուն խորհուրդ տուած է արթնութեան ժողովներու չերթալ, եւ պիտի ջանայ զանոնք ետ կեցունել այն ժողովներէն:

Արթնութեան ժողովներու մէջ խոստովանութիւններ ընող եւ արտասուալից աջօք աղօթող երկտասարդներ կը ճանչնամ, եւ անոնց որպէս թէ վերստին ծնանելէ ետքը վարած կեանքը դիտելով՝ չեմ կրնար վայրոյթս եւ արտասուքս զապել մարդոց կեղծաւորութեան եւ ամբարշտութեան վրայ: Եթէ արուեստակեալ կրօնասիրութիւն Հոգւոյն Սրբոյ դէմ մեղք չէ, չեմ գիտեր ուրիշ ինչ մեծ մեղք կայ:

Արժան չէ՞ Յիսուսի խօսքը յիշեցունել այն Ամերիկացւոց որ կը հարցունեն ինձ թէ Հայերն Յիսուսի կը հաւտան:

« Կեղծաւոր, հան նախ զգերանն յականէ քումմէ »:

ԵԱՆՔԻՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ՀԱՆԴԻՊՈՒՄՆ

(ՅԻՇԱՏԱԿ ՎԵՆԵՏԿՈՅ)

Անդ ուր վընէժ պարզեալ զիւր ծոց՝  
Յուցանէ բարձր ըզգըմբեթարդ,  
Յայսմէ զջրամբարձ յարկ շինուածոց,  
Իբրեւ քաղաք մի դիւթամարթ:

Եւ Սուրբ Մարկոս ընդ կըրկին սեանց(\*)  
Գայ յանդիման յերկն աղաւաղ,  
Չանգակատան հրեշտակապանձ  
Ճաճանչէ նուրբ 'ի շամանդաղ:

Սփիւռ 'ի վերայ արփին ջրոց,  
Ի հեշտին ժամս երեկորին,  
Կուր մեր 'ի թոյլ ծուփս ոսկեզօծ՝  
Թեթեւ ճօճէր ըստ թիակին:

Պատկեր ստուերաց շուրջ ծածանէր,  
Մերթ նըկարեալ 'ի հարթ ալիս:  
Ի լռութեանն անդորրաբեր  
Քաղցր յեշտակք զարթնուն յիս:

Ո՛հ երջանիկ այն վայրկեանք խուն  
Յորս կեամբ միայն յիշատակօք,  
Ներկայն, աւա՛ղ, է թաղծագոյն,  
Նուիրազան գեղն այն, սէրն է լոկ:

Մերթ 'ի հեռուստ գայր վէտ 'ի վէտ,  
Ջերդ արձագանգ մ'ալեաց՝ աւա՛ղ,  
Եւ նըւաղէր 'ի սիրտս անհետ,  
Իբր հինաւուրց զանխուհ հաւա՛ղ:

Սակայն տակաւ հոսին ծաւալ  
Ջըճով՝ երկնից բիւր երանգք վառ,  
Ոլորտք ընդ ջուրց շուրջ հիւ առեալ  
Ծիրանեծայր յամպըս ծըրար:

Ջովն այն ախորժ ծովուն խաղաղ  
Հանգուցանէր զմիտս 'ի վըշտաց,  
Խայտաբլղէտ ձրկանց 'ի խաղ  
Հետամբտեալ ընդ կուրին գնաց:

Սուրբ Գեորգայ կըղզեակն հանդէպ,  
Եւ ճիւղատեքքայն ձրգեալ յետուստ,  
Խոնարհէին զըստուերս 'ի ճեպ  
Ջգորանոցով նըսեմ վերուստ:

Արդ անջատի նաւակ անդէն  
Ջոր ձիգ վարէ զօրական ոք,  
Ջոմն՝ ալ՛լ երկուք ըզգոյշ պընդին,  
Յառնական ձեւս, ծաղկեալ հերօք:

Ճըմէալ խորշմս 'ի նայ ճակատ,  
Սէգ դէմք, աղու արդ տրեւագին,  
Վեհ ըզգացմունք հըրճուն յայն նկատ,  
Եւ կերպարանք մեկնեն զոգին:

Էր խուսափեալ յիւրում պահու  
Յըսպանանել զսեղեխ դըստեր,

(\*) Երկու սիւնք կանգնեալք 'ի փոքր հրապարտ-  
կին, առ ափն ծովու, մին բերելով անդրի վիշապա-  
տան, կարծեցեալ սուրբ Թեոդորայ, եւ միւսն զԱ-  
իւծ Վենետիկոյ, անտի երեւի սուրբ Մարկոս, մայր  
եկեղեցի:



Այլ ոճերդ այդ նախանձառու  
Հրացանահար 'ի մահ դատեր :

Հայեցաւ պիշ սիրունին իմ,  
Այնպէս իմն հեղ ցաւակցաբար,  
Յայտնեալ ըզգուծ իւր մըտերիմ՝  
Ձի գորովեաց զայրըն թըշուառ :

Պարզեցաւ խիտ ճակատն յուշիկ  
Յերեսս սահնեալ ժրպիտ ինչ մեղմ,  
Եւ գըլխիկոր զանձնըն ելիք,  
Մինչ ոստիկանք եւս ունին սեղմ :

Ոչ մոռացայց զժրպիտդ համբուն,  
Յանկարծ մըմնը կալաւ զմեզ,  
Ձգացաք յանդամն զով զերեկոյն,  
Մինչ ըսթափեաց ցունդ փըրփրագեղ :

Արտասուաց զոյգ կախին շիթք դժ  
Յականողիս իւր բարեբաշխ,  
Ձարտեւանունս խոնարհեցողց  
Խոնջ, սըրտաբեկ, հէք առնյերաշխ :

Անդ գողդոջուն լուսնի նըշոյլ  
Ձերմ սըփուեցաւ զգիմօք քընքուշ,  
Սիւզ յուսս ցըրուեաց ըզփարսից հոյլ  
Նընջեաց յիմ ծոց, անկեալ անյուշ :

ՎԱՀՐԱՄ ՍԸՎԱՃԵԱՆ  
Վ. Ի. Ե. Կ. 1885

## ՈՒԽՏԱԴՐՈՒԺՆ

(ԳԱԽԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹԻՒՆ)

Մշոյ «Ծառնայ» ըստած գիւղին մէջ երկու տարի  
առաջ միմեանց կը սիրահարին 20 տարեկան երիտա-  
սարդ մը եւ 17 տարեկան մի աղջիկ. սակայն աղ-  
ջիկն «Կիւլիզար» անուանեալ, մի այլ պատանիէ  
հրապուրուելով՝ կը գրծէ իւր տուած գաղտնի եր-  
գունմը. երիտասարդը, որ ժամանակի մը համար գիւ-  
ղէն բացակայ կը գտնուէր, ի դարձին լսելով զայդ,  
իւր անկեղծ ցաւը կը յայտնէ հետեւեալ սրտագրաւ  
խօսքերով.

Գարուն եկաւ, դաշտը բացուաւ,  
Ձուն քաշուեցաւ, ձնծաղիկն ելաւ.  
Կիւլիզարն թնդաց<sup>1</sup> գնաց յէգին,  
Ինք ու ուր ջուխտակ քեռէնկին :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Շէկիկ ծամեր, նըխշուն մեղար<sup>2</sup> :

Արտը գացի մանկզոն<sup>3</sup> 'ի ձեռս,  
Քաղել բաշլա<sup>4</sup> կտրիճի պէս,

Կիւլիզարն եկաւ անցաւ մօտէս,  
Աչիկ մ'ըրաւ, թըռաւ քովէս :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Վառեցիր զիս, կտրեցիր ըար :

Մեռնիմ քըզի սըրբ Յոհանէս,  
Ձուր ու բուխտան<sup>5</sup> կապին վըրէս,  
Այնար յըմէն ծիծղան վըրէս,  
Թէ Կիւլիզար խարեց ըզքեզ :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Անգուծ ես դու քընցի ըզ լաղ :

Ոտքեր ունիմ՝ դօմշու բիւք<sup>6</sup>  
Ձեռքեր ունիմ՝ նման ճալք<sup>7</sup> :

Երկար, խարտեալ ունէի հեր,  
Ինչի՞ս չը հաւնաք դու ու քու հէր :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Արցունք թափիմ բիւր հազար :

Յէգի քաղես, հաղող կ'ուտես,  
Ի՞նչ կ'եղնի օր ճուր<sup>8</sup> մ'ընծի բերես,  
Ձէ՛ օր Գրիստոս օսլաթ<sup>9</sup> ըրաւ,  
Անցնողին տալ մի մի խատաւ<sup>10</sup> :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Դէմքդ սիրուն, գինըդ հազար :

Սուրբ Գէորգ ուխտի վախտը հասաւ,  
Տօլի գուռնի ձայնըն ելաւ,

«Տէ՛, շուտ էրէ, կ'ասես ըու մօր,  
«Երթա՛նք հասնինք իմ Կոթ - աղբօր<sup>11</sup>» :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Ձանիս մօտէն եղայ բէզար :

Տօ՛, Կիւլիզար, դու գուծ շունի՞ս,  
Յորի՞ն<sup>12</sup> յըմէն օր զիս կը խաբիս.  
Կ'ուզե՞ս յիգամ հէր՝ սպաննիմ,  
Առնեմ գըզդի տանիմ, պահիմ :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Յընկնի կօրի ըր՝ կարմիր քամար :

Քաճրի աղջիկ չէնէր<sup>13</sup> զէտ բան,  
Ձը հանէիր զիմ հողին, ջան,  
Ի՞նչ կ'ուզէիր, թըշըսէր<sup>14</sup> որ տամ,  
Տաս ոսկի կուտայի բեզ խալան<sup>15</sup> :

Ա՛յս Կիւլիզար, վա՛յս Կիւլիզար,  
Քու չոր ձեռքդ, եղեր եմ զար<sup>16</sup> :

Վալլահ կ'երթամ, կորիմ, մեռնիմ,  
Եւ չը՞ս տեսնայ զիս քու մօտին,



Նստիմ ու լամ ես յըմէն օր ,  
Հար<sup>17</sup> մեռնիմ , մտնիմ հողէ հոր .

Ա՛խ Կիւլիզար , վա՛խ Կիւլիզար ,  
Հէրդ մեռնի կտորի քու ճար :

Ա՛խ , Տէր Աստուած , է՛լ չըմ խօսայ ,  
Դու հախն ու նահախն արա ,  
Երկուսէս ո՛վ է յանցաւոր ,  
Չէնի էրէ կտոր կտոր .

Ա՛խ Կիւլիզար , վա՛խ Կիւլիզար ,  
Ախր որ իմ ձեռքէս փախար . . . :

Գ . Ս . ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

<sup>1</sup> Հարժեցաւ . <sup>2</sup> Դաշտային ընակիչք «մեզար» կ'ըսեն այն բրդեայ թելերով հիւսուածքին , զոր խոհարարի ղեկավարին նման վրանին կը կապեն : <sup>3</sup> Գործը մանգաղ : <sup>4</sup> Սկսեցի . <sup>5</sup> զրպարտութիւն : <sup>6</sup> աղբ : <sup>7</sup> Հաստ եւ մարդեր տաշուած փայտ մը , զոր կանայք՝ պարի ատեն ձեռքերին կ'առնուն : <sup>8</sup> ողկոյլ : <sup>9</sup> պատուէր . <sup>10</sup> պարգեւ : <sup>11</sup> սովորութիւն է ընդհանրապէս Հայաստանի մէջ որ նորահաս աղջիկ մը իրեն տարեկից տղայի մը հետ՝ Աւետարանի առջեւ՝ կ'երդնուն «քոյր-եղբայր» լինել , այլ , սակայն ի պահանջէ հարկին կրնան միմեանց հետ ամուսնանալ : <sup>12</sup> ինչո՞ւ : <sup>13</sup> Թո՛ղ չընէիր : <sup>14</sup> Թո՛ղ ըսէիր : <sup>15</sup> պաշլըխ : <sup>16</sup> քերի , խաղալիք : <sup>17</sup> մինչեւ որ :

## ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ

### ԶՐՈՅՑՆԵՐ(\*)

#### ՃԱԿԱՏԱԳԻՐ

Ժամանկոց կ'ըլլի , չըլլի , թագաւոր մի կ'ըլլի . էս թագաւորը օր մի ինչպէս կ'ըլլի , սիրտը կը նեղատնայ , կերթայ ծովափը պտտա մի ընեւու . էտ ջաղին թագաւորը կը տեսնայ , որ՝ պղտիկ երեսէկ մի նստեր աւազներուն վրայ միս մինակ՝ ձեռուընուն ու մատուընուն հետ խաղ կ'ընէ ու քնթին տակէն ըլ վրայ մը ըլտուկ մի կը հանէ , ի՞նչ կ'ըսէ — ճակի՛ քերէ չե՛ս քերէ , ճակի՛ քերէ չե՛ս քերէ :

(\*) Որչափ կարելի է մենք պիտի արտայայտենք այս զրոյցները կամ «հեքիաթներ»ը այն ոճովն ու բառերով , որ տեղային ժողովրդեան լեզուին յատուկ շատ ու քիչ որոշ նմոյշներն ըսել են :

Թագաւորը կիմանայ մանուկ-հրեշտակի ըսածը , կը հարցնէ , ծո՛ւ պղտիկ , ի՞մ ճակտի գիրն ինչ է , գիտե՞ս . մանուկը սանքի հէնց մարդ մի ըլլի իրեն խօսողը , թագաւորին կը պատասխանէ . « Ի՞նչ պիտի ըլլի քու ճակատի գիրը , քու աղջիկդ անպատճառ քու դրագ Արպուն պիտի տաս » :

Թագաւորն ալ կարճ կը կապէ խօսքը որ սկսեց էտ հրեշտակ — տղայի հետ , տըրտում , խռոված՝ տուն կը դառնայ . տուն կը դառնայ , կինը Փարլին կերթայ , որ բան մի անպատճառ հանդիպէր է թագաւորին : Անուշ բերնով մի կը մտենայ , կը հարցնէ , ինչո՞ւ էս պահուն քեզ մուծ , մէլուր կը տեսնամ , երեսդ կախեր , քէ՛ֆ չունի՞ս , ի՞նչ եղաւ քեզի : Թագաւորն՝ ի՞նչ պիտի ունենամ , կ'ըսէ , վրած սրտով մի , մեր աղջիկն եղեր մեր դրան Արպուն պիտի տանք , մեր ճակտին գիրն է աս ու անշուշտ ըլ պիտի կատարուի :

Կնիկն իր թագաւոր էրկան մտքին վրայ չուղեւով մորեկ ցանեւ , սիրտ կուտայ էնոր աւելի եւ կը յայտնէ որ ատկէ ի՞նչ դիւրին բան , բեռ մի փարայ տուր հիմայ Արապին ձեռքը , խրկէ , որ արեւծէթը վերկու ժողովել երթայ . ի՞նչ գիտեմ , կը մեռնի՞ տէ՛ կը դառնայ :

Կը հաւնի այս խորհուրդին թագաւորը , որ մինչեւ ատ ատեն անկճուին կախեր կը մտմտար , Արապը թեզօք մի դէպի արեւծեթ ճամբորդ կ'ընեն :

Շատ կերթայ քիչ կ'երթայ , Արապն է ճամբուն վրայ կը տեսնայ երկիր մի ձիւանտ , որ կեցած տեղերնէն ձէն կուտան , կը պոռան « Մեր հալն ի՞նչ պիտի ըլլի , ճանրորդ , մենք հոս առտուընէ մինչեւ իրիկուն արեւուն տա՛լ կը խաշինք , կը խորվինք , արեւը թա մեր ոսկրներուն ծուծը հեղեցուց , գնա՛ , կաղաչինք , մեր վիճակը պատմէ » :

Ճամբորդը կը խօստանայ էսոնց , որ խնդիրքնին կատարէ . ինք դու կերթայ , կերթայ , կերթայ , էս անդամ ըլ ճանրուն վրայ կը տեսնայ անհամար բաղմութիւն մարդիկներու , որ բոլորն ըլ գլխուն վրայ հող ու մախիւր կը չափեն , կը տեսնեն Արապը , իրենք ըլ ձիւերն ինչպէս , էն կերպը աղաղակ կը վերցնեն ըսելով . « Ո՛վ մարդ , մեր հալն ի՞նչ տըլլի , առտուընէ



մինչեւ իրկուան գլխնուս վրայ հող ու մախիր կրելէն հոգեստանս բերուընիս եկած է, ամա՛ն, ամա՛ն, գնա արեւուն մեր վիճակը ըսէ»։ Արապն էսոնց ըլ խօսք կուտայ, երրորդ անգամ կը հանդիպի մօր մի ու աղջկայ մի, որ ամմայի երկրի մի մէջ նստեր իրարու երես կը հային, էսոնք ըլ խնդիր կ'ընեն դէպի ճամբորդը. «Ս'յ աղբար, կ'ըսեն, ինտո՞ր արեւը դուրս չունի մեր վրայ, որ աս անապատներուն մէջ մեզ միս մինակ թողած է, եկող դարձողին ոտքին տայն ինք մնացեր։ Արապը վերջին անգամ էսոնց ըլ սիրտ կուտայ, ինք կաւտորնայ որ շուտ արեւուն ժմնի։ Լեռն էլ եւ, թուփէ թուփ, ախրը կը հասնի, ելլելու վրայ կ'ըլլի արեւը, հը մը կը բռնէ փէշերուն, կ'ըսէ. «Ո՛ւր էտպէս էճէլէ կերթաս, հո՞գի արեւ, կեցիր պահիկ մի, ես քեզի շատ խնդիրներ ունիմ»։ կը սկսի մէկ մէկ ճամբուն վրայ տեսածներն ու էնոնց վիճակը պատմել։

Արեւը կը լսէ ամեն կերպով եղածը Արապի բերնէն, անոր թէզօք մի թարիֆ կընէ, կ'ըսէ որ «Գնա՛, առաջ առաջ էն մօրն ու աղջկանը ըսէ որ՝ դուռը բացէք, ներս մտնամ, աղբիրը տեսնամ, մար, աղջիկ բեղի պիտի ըսեն, մեր տունը աղբիր մաղբիր չիկայ, դուն կարողես երեսդ ժրել ու զօրով ներս մտնել, պիտի գտնաս առջեւդ աղբիր մի, մեծկակ ալ աւազան ջուրի, մերկ մսիդ վրայ կաշիէ փոկ մի կապած՝ ընկիր, լոկցիր աւազանին մէջ, ան ատեն դուն բու մորթդ ձոնի պէս պիտի ճերմակ գոն ունենաք, ու ջուրն ըլ ամբողջ ոսկի պիտի կ'ըլլի։ Մարդիկը որ տեսած ես ճանապարհին հող կը խառնեն, էնոնց ըլ ասպարէ որ ձիերու բազմութիւնը առնեն քեզի գան, ոսկին բառնաս, առնես երթաս, ուսկէ եկեր ես»։

Արապն արեւի թարիֆ ըրածին պէս բան ետ չի թողուր, ամենքն ըլ կը կատարէ, աղջկան մէրն իրեն մէր, աղջիկն ըլ քուր ընելով՝ ոսկիով բեռցած ձիերն առջին խառնած մեծ բազմութեան ու հարստութեան հետը կ'իյնայ ճանքայ։ Օրեր, շաբաթներ ճանքայ բալելով կը մօտե՛յ այ թագաւորի երկրտոց սիւօրին, ատ պահուն կը լսուի թէ մեծ մարդ մի կուգայ երկիրը։

Թագաւորն ըլ ամեն կերպ պատրաստութիւններով կ'ելլայ, կ'երթայ եկող մեծ

մարդուն դիմացը եւ կը տեսնայ, որ իրաւ իրաւ, թագաւորի մը պէս կամ բան գինքն գէնկին մէկն է այն, սիրտը կը բթրտայ։

Քանի մի ատեն կ'անցնի, չանցնի երբ մեծ մարդուն ամեն ունեցածին տեղեակ կ'ըլլին, թագաւորի կինն է, թագաւորն ինքն ըլ խորհուրդ մէկ կ'ընեն, որ մութ լախայ աղջիկինն էտ գէնկին ջոջին կին տան։ Երկուդիէն ըլ այս բանին կը հաւնին. տըղան՝ մեծ մարդը առջի անգամ նազ ընելն ըլ շի մոռնար։ Վերջապէս թագաւորը կը աշողի կարգել ատ մարդուն իր տննայ աղջիկը, որ իրաւ աննման գեղեցկութիւն ու հիւնէրներ ունէր, եւ գոհ ըլ կըլլի աղջկայ դտած տեղին ու աղին համար։

Այս բաներէն վերջ որ մի ինչպէս կը պատահի, փեսան լաթերը վար առնելով թագաւոր աներին առջեւը կը կայնի կ'ըսէ. «Կը հաւատաս որ ես ինքս բու դուայ Արապն իմ, բու ծառան որ արեւծեթ վէրկու ժողվել ճանքցիր, աչքովդ ահա նշանս տես, պիտի հաւատաս»։ Փոկին կապտած տեղը սեւ գիծ մի մնացեր էր Արապի մորթին վրայ խորհրդաւոր աղբիւրին մէջ լոկնալէն յետոյ, թագաւորը աչք ձգեց, տեսաւ ատ նշանը աչքովը, խորին ասլութեան մը մէջ դռնեց. «Իրա՛ որ ճակի՞ն գիրը կարգաւ պիտի եղէր»։

Երկնուց ինկան տասնը մէկ խնձորներ. մէկը լսողին, տասը պատմողին։

Հաւաքեց

Խարբերդ

Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

## Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

### ՀԱՅՅԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԼԵՁՈՒՆ

Ուսթըրի (Մ. Նահանգք) «Տէյլի Սթայ» լրագրին մէջ Պ. Յ. Կարապետեան հետեւեալ տեղեկութիւններն հրատարակած է Հայոցս եւ մեր լեզուին վրայ. Թէեւ Պ. Կարապետեանի նամակը նոր բան մը չըսեր մեզ եւ մանաւանդ յոյժ կողմնակալ ոգւով մը գրուած է Միսիոնարաց գործունէութեան նկատմամբ, սակայն թարգմանութիւնը մեզ զրկուած լինելով կը հրատարակենք դէթ գաղափար մը տարու համար թէ օտար երկրաց մէջ ի՛նչ կերպիւ կը խորհին մեր վրայ։



Հայոց եւ իւրեանց լեզուին վրայ փոքր ինչ գիտցուած է այս երկրին մէջ: Հայաստան երկիցս հանուր մարդկութեան որորանն եղած է, հետեւաբար երկնից ներքեւ եղող ամէն ազգ պարտի բնական սիրով սիրել զայն:

Այս երկիրն յիշուած է յոյն եւ հռովմայեցի հին պատմիչներէ. նաեւ բազմիցս յիշուած կամ ակնարկուած է այլ եւ այլ անուններով Սուրբ Գիրս, Ծնն, Ը. 4, Ժ. 3, Բ. Թագ. ԺԹ. 37, Ա. Մնաց. Ա. 6, Եսայ. ԼԵ. 38, Երեմ. ԾԱ. 27, Եզեկ. ԻԵ. 14: Այս վկայութեանց ոմանց մէջ առաջին տեսութեամբ թերեւս Հայաստանի վերաբերեալ որ եւ է ինչ չտեսնուի, սակայն երբ Ս. Գրոց Բառարան մի քննենք, յայնժամ Թորգոմ, Միննի եւ Արարատ բառերուն նշանակութիւնը կը հասկնանք: Եթէ աւանդութիւնն արժէք մը ունի, Յով. ԺԲ. 20րդ համարին մէջ յիշուած «Քանի մը Յոյներ» բառերով Հայք կ'ակնարկուին, որոց համար կ'ըսուի թէ մեր Աբգար Թագաւորն զրկեց յերուսաղէմ տեսնել զհամբաւեալն «Նազովրեցի Յիսուս», եւ խնդրել ի նմանէ որ գայ եւ բռնէ իւր բորոտութիւնն:

Ռօիինսըն կ'ըսէ. «Լեռնադաշտին կեդրոնը, Փոքր Ասիոյ այն բաժինը՝ որ կը տարածի Երեւանէն մինչեւ Գըզը Լըմազի վերին ճիւղը դէպ յարեւելք, եւ արեւմտեան սահմանն է Սեբաստիա եւ չըջակայք, էր Հայաստան, ինչպէս նաեւ հիմա: Այս բլանական ամրութեանց մէջ, երկրի մը մէջ՝ որ լի է բարձր լեռներով, խորունկ եւ նեղ հովիտներով, բազմաթիւ եւ յորդ գետակներով ու երբեմնական ընդարձակ դաշտերով, երկիր մը որ առատ արօտ ունի, բերրի այգեստաններ եւ բազմապատիկ հունձք, այսպիսի երկրի մը մէջ այս ուշադրութեան արժանի ժողովուրդն մնացած է գրեթէ անփոփոխ՝ նախնի պարսիկ թագաւորաց ժամանակէն մինչեւ ցայսօր: Հայաստան Պարսկական կայսրութեան ամենապատուական մասերէն մին էր, ըստ որում Պարսիկ թագաւորին՝ իբր տարեկան տուրք կը վճարէր 20,000 ընտիր ձի, ի բաց առեալ քարն՝ ատաղձն եւ այլ արժէքաւոր հանքայինք զորս կը հայթայթէր նմա Հայաստան:

«Վանայ արձանագրութիւնը կը ծանուցանեն մեզ թագաւորաց շարք մը որ ա-

րեւելեան Հայաստանի — բուն Արարատի — մէջ տիրեցին եւ թէ՛ քաղաքակրթութեան եւ թէ՛ պատերազմական զօրութեան մասին յոյժ զարգացեալ էին քան որ եւ է ոք յիշխանաց որք բաժնեցին զՀայաստան իրենց մէջ:»

Հայկական բարբառին նկատմամբ նոյն հեղինակը կ'ըսէ. «Հայաստանի նախնի Թուրանեան լեզուն որ Վանայ եւ չըջակայ դաւառաց բեւեռագրերուն մէջ կը տեսնուի, տեղի առած է արդի լեզուին որ գլխաւորաբար Արիական է»:

Մեր գրականութիւնը որ սկիզբ առաւ 4րդ դարուն մէջ, ամբողջապէս կրօնական է, եւ կը ցուցունէ թէ Հայերը միշտ կրօնասէր ժողովուրդ մը եղած են, ինչպէս այժմ: Հայկական այբուբէնը, որ 38 գրերէ կը բաղկանայ, հնարեց Մեսրոպ Գրիստոնէական թուականին հինգերորդ դարուն առաջին տասնեկին մէջ: Նոյն դարուն մէջ Սրբազան Մատենին թարգմանութիւնն ևս սկիզբ առաւ, բայց չըրացաւ մինչեւ Եփեսոսի ժողովոյն վաճառը (451):

Մեր ամբողջ գրականութիւնը մեծապէս ազդուած է Յունականէն: Հին Հայերէնի մէջ կան բազում Յունական բառեր եւ ոճեր: Մեր Քերականութեան համաձայնութիւնը դործնականապէս նոյնն է Յունականին հետ: Նոր Ատակարանին թարգմանութիւնը շատ ընտիր է, եւ այնչափ գրական, որ Սբ. Գրոց աշակերտողին քննութեանը արժան է գրեթէ ճիշդ այնչափ որչափ նոյն դարուն վերաբերեալ Յունարէն ձեռագիր մը: Ես ինքնս անգլիական սրբագրեալ թարգմանութեան մի քանի կէտերը բաղդատած եմ հին Հայերէն թարգմանութեան հետ, եւ Հայերէնը համաձայն գտած եմ բազում բարեփոխեալ հատուածներու հետ:

Կ'ըսուի թէ Հայերէն լեզուն՝ Արիական լեզուաց Խրանեան ճիւղին կը վերաբերի, ինչպէս ըսի, շատ բառեր ուղղակի Յունականէն առնուած են: Սակայն շատ բառեր ալ կան որք բուն մեր լեզուին կը վերաբերին ու նախնական են եւ հնչմամբ ու նշանակութեամբ ալ արիական լեզուաց բառերուն կը համապատասխանեն: Հետեւեալները թերեւս ամենալաւ օրինակներն են.



| Հայ    | Յայն      | Լատին   | Անգլ      |
|--------|-----------|---------|-----------|
| Լայս   | Լուքսոս   | Լուքս   | Լայթ      |
| Բերեմ  | Ֆերո      | Ֆերո    | Ֆեր       |
| Ածեմ   | Ակո       | Ակո     | (Էյճընթ)  |
| Նաւ    | Նաւս      | Նավիս   | (Նէյվի)   |
| Դուստր | Թհուկաթեր | .....   | Տօթըր     |
| Էշ     | Օնոս      | Ասինըս  | Աս        |
| Փետուր | Փթերօն    | Փէննա   | Ֆէտհըր    |
| Տամ    | Տիտոմի    | Տօ      | (Տէյթիվ)  |
| Մեծ    | Մէկաս     | Մակնուս | (Մէկնիթի) |
| Աստղ   | Ասթեր     | Ասթրում | Աթար      |
| Լեռ    | Լեռ       | Լեռ     | Լեռ       |

Բոլոր այս բառերը եւ այլ բազումք կը տանին մեզ սա եղբայրացութեան թէ հայկական լեզուն՝ լեզուաց արիական ընտանիքին կը վերաբերի :

Հասարակ ժողովրդեան գործածած արդի հայերէնը խառն է բազում թրքական բառերով եւ ասացուածներով, բայց գրականը յստակագոյն է :

Բազում գրքեր եւ թերթեր կը տպուին ի Կ. Պօլիս, սակայն մամուլը ազատ չէ :

Հայք աւելն օր նորանոր ջանքեր կ'ընեն բարձրանալու եւ քաղաքակրթեալ աշխարհին հաւասարելու համար :

Ամերիկեան Քրիստոնեայ բարեկամք մեծ գործ տեսած են ի նպաստ այս ժողովրդեան զարգացման եւ քաղաքակրթութեան՝ միսիօնարներ զրկելով, դպրոցներ եւ ուսումնարաններ հաստատելով այս երկրին մէջ : Սիրելի բարեկամք, կը հաճի՞ք ազօթել այս խեղճ ժողովրդեան, այսինքն հին Գրախտի բնակչաց համար :

## ՅԻՇԱՏԱԿ ՄԸ

### ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԳՈՐԶԱԿՈՎ ԻՇԽԱՆԷՆ

Երկաթուղու իջեւաններին մինի մօտ կանգնած էր արդէն պատրաստի գնացքը . խիեցին երկրորդ զանգակը եւ ամբոյսը սկսեց խնուել : Բեռների բաժանումի զուներին մօտ, մի կողմը կանգնած էր իջեւանի կառավարիչը եւ ուշադրութեամբ գնում էր մի ճանապարհորդի : Զանգակի թելից բռնած, կանգնած էր ծառան եւ սպասում էր կառավարչի նշանին : Առաջին կարգի վագօններից միում տեղաւորուեցաւ մի ճանապարհորդ : Նրան ճանապարհ ձգող

ծառան տեղաւորեց ծերունու իրեղէնները եւ գնաց : Երրորդ զանգից առաջ, յանկարծ ներս մտաւ կօնդուկտօրը եւ տեսներով վագօնում ծերունուն դիմեց նրան հետեւեալ խօսքերով .

— Ներողութիւն կրեցէք տեղափոխուել միւս վագօնը :

— Ինչո՞ւ, քաղաքավարութեամբ հարցրեց նրան ճանապարհորդը :

— Այս վագօնը բռնուած է :

— Բայց ներեցէք, ես ի՞նչպէս կարող էի իմանալ թէ այս վագօնը բռնուած է, քանի որ սրա մէջ ո՛չ իրեղէններ կային եւ ո՛չ էլ գրուածք :

— Բոլորը մէկ է, ես ես ձեզ այժմէն յայտնում եմ, որ նա բռնուած է, ուստի խնդրում եմ նեղութիւն կրէք նստել հասարակաց վագօնում :

— Պարոն կօնդուկտօր, միթէ տեղի իրաւոնքը չի՞ պատկանում նրան, ով շուտ նրան վարձել է :

— Ում էլ չը պատկանէր նա, սակայն ես ձեզ ասում եմ, որ այս վագօնը բռնուած է, ուստի նեղութիւն կրեցէք դուրս գալ :

— Լսեցէ՛ք, պարոն, ինձ անհանգիստ մի՛ անէք, ես ծերունի եմ, ինձ դժուար է մէկ էլ դուրս գալ այստեղից, քանի որ տեղաւորուած եմ :

— Իսկ ես, անհամբերութեամբ եւ փոքր ինչ բարձրացնելով ձայնը ասաց կօնդուկտօրը, խնդրում եմ ձեզ փոխել ձեր տեղը, որովհետեւ այնտեղ պիտի նստէ երկաթուղու կառավարիչ նորին գերազանցութիւնը որ այժմ որ տեղ որ է՝ ներս կը մտնէ :

Միթէ նորին գերազանցութիւնը այնքան բարի չի՞ լինիլ, որ թոյլ տայ ինձ այստեղ մնալու :

— Ի՛նչ էք ասում, պարոն, մեր կառավարիչը սիրում է միշտ միայնակ ճանապարհորդել, ուստի խնդրեմ տեղափոխուեցէք :

— Եթէ այդպէս է, ես ստիպուած եմ յայտնելու ձեզ, որ ես այստեղից դուրս չեմ գալ, քանի որ այս տեղը ես արդէն դէն վարձած ունիմ :

— Նա իսկոյն կը հրաւիրեմ իջեւանի կառավարչին եւ նա ձեզ դուրս կը հանէ այստեղից :



Այս խօսքերից յետոյ կօնդուկտօրը դիմեց դէպի կարդինալի գլխարկով մի պարոնի: «Կարդինալը» շուտով ներս եկաւ:

— Լսեցէք, պարոն, ասաց նա, թէ եւ խիստ, սակայն քաղաքավարի, — նեղութիւն կրեցէք դուրս գնալ այստեղից, երբ ձեզ խնդրում են եւ տեղափոխուեցէք մի ուրիշ բաժին:

— Ես կամենում էի խնդրել ձեզ, պ. կառավարիչ...

— Ո՛չ, ո՛չ, անկարելի է, ընդհատեց նրան իջեւանի կառավարիչը, նեղութիւն կրեցէք դուրս գնալ:

— Եթէ այդպէս է, խնդրում եմ ինձ հանգիստ թողնել, սառնութեամբ պատասխանեց ծերունին, ես դուրս չեմ գնալ:

— Դուք ինձ ստիպում էք ձեզ այստեղից ժանդարմով դուրս հանել:

— Ինչպէս կամիք:

— Ժանդարմ, ժանդարմ դուրս տարէք, խնդրում եմ այստեղից, այս կամակոր ճանապարհորդը:

Ներս մտաւ ժանդարմը եւ ցոյց տալով ծերունու վերայ, ասաց.

— Սրա՞ն.

— Այո՛:

— Պարոն, նեղութիւն կրեցէք դուրս գնալ:

— Ձեմ կամենում, ես դուրս չեմ գնալ:

— Ես ձեզ ոյժով դուրս կը տանեմ եւ արձանագիր կը կազմեմ:

— Կարող էք:

— Ի՞նչ է ձեր ազգանունը:

— Ահա՛, այս է: Եւ այս խօսքերից յետոյ ծերունին տուեց ժանդարմին մի մեծ այցետոմսակ: Ժանդարմը առաւ տոմսակը եւ սկիւնի բարձր ձայնով կարդալ նրան.

«Իշխան Գօրչակով — պետական նախարարապետ: Արտաքին գործերի նախարար»:

Այդ միջոցին, թէ՛ խիստ կօնդուկտօրը, թէ՛ նոյն ինքը կարդինալը մի վայրկեանում յետ քաշուեցան վազօնից:

Լարի պէս ցցուած ժանդարմը տուեց պինդորակիան յարգը բարեսիրտ ծերունուն՝ ասելով. «Մեղաւոր եմ, Ձերդ Պայծառափայլութիւն, — սխալուեցայ»:

Գնացքը սուղեց եւ սլացաւ:

Արդէն նա անհետացաւ հորիզոնում, իսկ կարդինալը շուարած կանգնած մնաց իջեւանի առաջ, այնպէս, որ մօտից անգամ դժուար էր որոշել, որտեղ է վերջանում նրա կարմիր երեսը եւ որտեղից է սկսում նրա կարդինալական գլխարկը:

(ՆՈՐ - ԴԱՐ)

## ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐԻ

|     |     |                 |
|-----|-----|-----------------|
| Թիի | 6.  | (Մասի թիւ 3798) |
| »   | 40. | » 3802)         |
| »   | 41. | » 3803)         |
| »   | 42. | » 3804)         |

ԽՆԴԻՐ

Թիի 42.

Ա Յ Գ Դ քառակուսւոյ մը չորս կողերուն վրայ հաւասարակող եռանկիւններ կը շինենք: Ապացուցանել թէ սոյն եռանկեանց արտաքին դադաթիւները միացնելով կազմուած քառանկիւնը քառակուսի մ'է եւ հաշուել նորա տարածութիւնը:

Խ Ն Դ Ի Ր Թ Ի Ի 9

Լ ՈՒ Մ ՈՒ Մ Ն

†, +, § կոչենք ըստ կարգին իւրաքանչիւր տեսակ ճանապարհորդաց թիւերն: Հետեւեալ երկու հաւասարութիւնները կ'ունենանք.

$$(1) \quad \dagger + + + \S = 40$$

$$(2) \quad \dagger + 2 + + 4 \S = 40$$

(2) հաւասարութեան մէջ 4 յայտարարը անհետացնելով

$$(2) \quad \dagger + 8 + + 16 \S = 160$$

(1) հաւասարութիւնն եզր առ եզր (2) հաւասարութեան հանելով կ'ունենանք

$$(3) \quad 7 + + 15 \S = 120 \text{ յորմէ.}$$

$$+ = \frac{120 - 15 \S}{7} \text{ եւ}$$

$$\S = \frac{120 - 7 +}{15}$$



Դիտենք թէ ֆամբողը թիւ մ'է որով եւ 120-7+, 15 ով բաժանական պարտի լինիլ : Արդ յայտնի է թէ երբ տարբերութեան մը առաջին եզրը թուով մը բաժանական ըլլայ, երկրորդն եւս ճշդիւ բաժնուելու է նոյն թուով, որպէս զի տարբերութիւնն ալ բաժանական ըլլայ : Ֆի արժէքին մէջ 120 բաժանական է 15 ով, ուրեմն 7+ եւս պարտի 15 ով բաժանական ըլլալ : Արդ որպէս զի 7+ 15 ով բաժանուի, քանի որ 7 նախնական թիւ մ'է, պէտք է որ +, 15 ի բազմապատիկ մ'ըլլայ. իսկ ֆայն ատեն միայն զրական թիւ մը կրնայ ըլլալ երբ + հաւասարի 15 ի : +ի սոյն արժէքը տալով կը գտնենք  $\phi = 1$  եւ  $\frac{1}{\phi} = 24$  :

ՊԱՏ. — 24 ճանապարհորդը կան որոց 4ը 1 ոսկի կը վճարեն. 15 ճանապ. իւրաքանչիւրը 2 ոսկի վճարող եւ 1 ճանապարհորդ որ 4 ոսկի կը վճարէ :

### ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Բարսեղ Մ. Մկրտչեան, Աշակ. Ղալա-  
թիոյ վարժարանի  
Օր. Մ. Զօհրապ, Գատը-դիւղ  
Տ. Կ. Նաւասարդեան, Իզմիր  
Տ. Ս. Պետրոսեան, Կիրասոն  
Օր. Ա. Գ. Գ., Իսկիւտար  
Տ. Կ. Յ. Աղաբէկեան »

— Սոյն խնդրոյ լուծմունք բաւական գուհացուցիչ կերպիւ պատճառաբանեալ չ'են առ հասարակ, եւ գրեթէ մեքենաբար եղած են :

Տ. Ս. Պ. Կիրասոն. — Քիչ մ'աւելի բացորոշ եղեք :

Օր. Ա. Գ. Գ. եւ Տ. Կ. Յ. Աղաբէկեան. — Ինչպէս արդէն ծանուցած եմք, կը կրնանք թէ իւրաքանչիւր խնդրոյ լուծումն մասնաւոր թղթի մը վրայ գրուած ըլլալու է, ապա թէ ոչ չենք կարող պատասխանատու լինիլ եթէ մեր ուշադրութենէն վրիպին :

Սոյնը կը խնդրուի նաեւ Մասիի խնդրոց լուծմամբ զբաղող բոլոր անձերէ :

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Պուլկարիոյ ապստամբական շարժումն իւր հակահարուածն ունեցաւ թուրքօ - հելլենական սահմանադրւոյն վրայ :

Քաղաքական աշխարհի ուշադրութիւնն՝ որ սեպտեմբեր 18 էն ի վեր կեդրոնացած էր Պալքանեան Թերակղզւոյն վրայ, կը դըրաւուի ահա յանկարծ Յունական խնդրով մը որ կը յաջորդէ Բուլղարական խնդրոյն :

Պարագայից տարօրինակ բերմամբ, Պուլկարը՝ որք դեռ երեք ամիս առաջ անհնազանդ՝ կը գտնուէին գերիշխան Պետութեան դէմ, խզելով ամեն յարաբերութիւն, այն աստիճան որ մինչեւ իսկ Օսմ. բարձր Գոմիսէրի մը յԱրեւելեան - Բուլղարի առաքումն անժամանակ կը նկատուէր, խոհեմութեան առաջին օրինակը կուտան այժմ եւ՝ առանց Արեւելեան - Բուլղարիէն հեռանալու՝ հաշտ յարաբերութեան մէջ կը գտնուին Բ. Դըրան հետ : Պուլկարիոյ արտաքին գործոց նախարար Պ. Զանոֆ՝ ընկերակցութեամբ Կատպան էֆէնտիի, մայրաքաղաքս եկած է եւ ի դիմաց Աղեքսանդր իշխանին կը բանակցի օսմ. նախարարոց հետ, համաձայնութեան մը հիմունքն հաստատելու համար. այսպէս մինչ Տէրութիւնը Թուրքիոյ եւ Պուլկարիոյ կը թողուն իրենց առաջարկներն հաշտեցունելու հոգը, միւս կողմէ չեն կրնար խօսք հասցունել Յունաստանի, եւ մինչ զինուորական միջազդային Յանձնաժողովը կը գումարի ի Պուլքէշ՝ իբր չեզոք քաղաք մը՝ սերպօ - պուլկարական պատերազմի հաշտութեան պայմանագիրը կնքելու համար, անդին նոր պատերազմի մը երկիւղներ կը ծագին :

Հակառակ Եւրոպիոյ կրկնակի ազդարարութեանց, Հելլենական կառավարութիւնն անընդհատ յառաջ տարաւ իւր զինուորական պատրաստութիւններն եւ յունուար 15ին լուր կ'առնուէր, թէ եւ անհաստատ կերպիւ, թէ հելլենական սահմանադրւոյն վրայ փոքր կուլաներ սկսեր են թուրք եւ հելլէն զօրաց միջեւ : Սովորական ժամանակներ,



այս տեսակ թերամարտք աննշան կ'անցնին, իսկ մտային ընդհանուր գրգռման օրերու մէջ, որպէս այժմ, եթէ ոչ ճակատամարտի մը նախաքայլը կը համարուին անոնք, գէթ տեսակ մը նախազգացում կը պատճառեն: Երկուշաբթի օրէն ի վեր տեղական մամուլը էջերը գրեթէ բոլորովին գրաւուած են այս խնդրով: Նախարարաց Խորհուրդն անըդհատ կը գումարի ի Բ. Դուռն եւ կարեւոր որոշումներ կուտայ. ծանուցագիր մը ղըրկուեցաւ Տէրութեանց, պահանջելու համար որ Եւրոպա իւր միջամտութեամբ զենքնկէց ընէ զՅունաստան, հակառակ պարագային մէջ Թուրքիա ազատ նկատելով զինքն վերջնագիր մ'ուղղել Յունաստանի և ապա հարկ եղած ազգու միջոցներուն, իմա՝ պատերազմի, ձեռնարկելէ Այս ծանուցագրոյ առաջումն արդեւ չ'եղաւ սակայն որ կայս. կառավարութիւնը գործնապէս ցոյց տալ ուզէ թէ վերջին ժամն հասած է. զինուորական զօրութիւնը, մեծաքանակ թնդանօթ, ռազմամթերք, դէպ ի սահմանագլուխը կը ղրկուին Սելանիկի ճանքով. օսմանեան զրահաւորը կազմ եւ պատրաստ՝ առաջին հրամանին կ'պատեն եւ անոնցմէ մէկ երկուքը մեկնած իսկ են:

Նաւային շարժումն որ կը տիրէ Միջերկրականի մէջ, առաւել եւս կը հաստատէ մօտաւոր պատերազմի մը երկիւղներն: Անգլիական նաւատորմն հրաման ստացած է Պիրէոնի առջեւ երթալ, աւստրիական նաւատորմն հաւանաբար անդ հասած է այս պահուս. ռուսական երկու զրահաւորը Իզմիրի նաւահանգիստը կը գտնուին, և միւս Տէրութեանց նաւատորմը եւս քիչ չափ շարժուն վիճակի մէջ դրուած են: Հելլենական կառավարութիւնն արդէն իսկ ճանաչաւ հանած է իւր բոլոր զրահաւորները, մարտանաւերն և ծովաւաճառակիրներն՝ բացերն երթալու համար, որպէս զի Պիրէոնի նաւահանգստին մէջ չ'ընդունին եւ չ'ապաւորին մեծ նաւատորմերէն:

Մեծ ոգեւորութիւն կը տիրէ Յունաստանի մէջ. հելլեն ժողովուրդն՝ արդէն իսկ դիւրագրգիռ, ցոյցեր կ'ընէ. ժողովրդային գումարումներ միմեանց կը յաջորդեն. քանի մը հազար հոգի երեքշաբթի օրը Աթէնքի արքայական պալատան առջեւ խռնուելով, փափագ յայտներ են Եօրկիրոս թագաւորը

տեսնել: Երիտասարդ վեհապետը սլաքը՝ գամն ելնելով, քանի մը սիրալիր խօսք ուղղեր է ժողովրդեան, խնդրելով որ Ազգը վստահութիւն ունենայ իւր վրայ. որոտընդոստ կեցցէներով ընդունուեր են թագաւորին խօսքերն որք յոյժ լաւ տպաւորութիւն ըրած լինիլ կը թուին ժողովրդեան վրայ: Յոյն նախարարը գլխերային նիստեր կը գումարեն եւ կը խորհրդակցին թագաւորին հետ:

Խրտումներ ալ կը նշմարուին Կրէտէի մէջ. տեղական թերթ մը մինչեւ իսկ ծանոյց թէ խռովութիւն ծագած է անդ, բայց ապա հերքուեցաւ այս լուր:

Սակայն միջադէպեր անպակաս են Կրէտէի տէրնակ յունաց համար, այսօր Պ. Զիկոմալայի մը խնդիր է, վաղը Թաի մէջ հրատարակեալ յօդուածի մը խնդիր (\*), եւ այսպէս, Պաքստենան տագնապին ծագումէն ի վեր, հելլենական կառավարութիւնն առիթ ձեռքէ չ'անցնեց խոչնդոտներ յարուցանելու կղզւոյն օրինաւոր իշխանութեան դէմ. հարկ եղաւ որ Թուրքիա իւր պատրաստութիւնները տեսնէ Կրէտէի մէջ. կղզւոյն զանազան նաւահանգիստները պաշտպանուած են օամ գրահաւորներով, եւ ցամաքի վրայ բաւական թուով զօրք եւ թնդանօթ կը գտնուին:

Համառօտիւ այս է ահա արդի կացու-

(\*) Պ. Զիկոմալա՝ գործակատար Կրէտէի հելլենական հիւպատոսարտին, ժամանակէ մ'ի վեր լաւ յարաբերութեան մէջ չ'է կուսակալ Սալա փաշայի հետ. Բ. Դուռը քանիցս յիշեալ պաշտօնատարի հրաժարեցումը պահանջեց, Աթէնքի Դահլիճը զանազան առարկութիւններ ըրաւ, ծանուցագիրք փոխա. նակուեցան եւ այնքան երկարեցաւ խնդիրն, որ առանց հարթութեւն, կորոյս իւր կարեւորութիւնը:

Կրէտէի յունաց միտքն զբաղեցնող նորագոյն խնդիրն է Փարիզի «Թան» լրագրոյն մէջ հրատարակեալ կարգ մը թղթակցութիւններ՝ որք կղզւոյն Փրանսական հիւպատոս Պ. Բուլթուլիի կը վերաբըռնին: Այս թղթակցութիւնք կասկածի ներքեւ կը ձգէին Կրէտէի յոյն բնակչաց զգացումներն հանդէպ իրենց մայր հայրենեաց՝ Յունաստանի: Այս վերջինք ցոյց մ'ըրին, հերքելու համար «Թան» ի հրատարակութիւններն և այս առթիւ ձեռքաւարութիւնք իսկ եղած են:

Զմոռնաք յարել թէ Պ. Բուլթուլի յայտարարած է թէ ինք չ'է հեղինակն այդ հրատարակութեանց որք մեծ ներգործութիւն ըրած են Բանտիոյ քրիստոնէայ ժողովրդեան վրայ:



թիւնն, իրողութիւնները միայն յառաջ բերելով:

Բայց թէ ի՞նչ պիտի լինի այս ամենուն հետեւանքն, եթէ արդարեւ պատերազմ հրատարակէ Յունաստան, այս մասին դժուար է յոռետես չլինիլ: Թողունք որ Թուրքիա իւր ծովային եւ ցամաքային այժմեան զօրութիւններով կատարելապէս կարող է Յունաստանի թեկնածութիւնները խեղդել իրենց ծագման մէջ իսկ, մեծ Տէրութեանց շատերը՝ նախաձեռնութեամբ Անգլիոյ, կազմ եւ պատրաստ կ'սպասեն զսպելու համար նաւային ո՛ր եւ է չարժու՛մ Միջերկրականի մէջ: Դատ կը վախցուի որ Յունաստան, եթէ պահ մը մոռնալով իւր նախահարց քաջադործութիւնները, պաղարեամբ չ'նկատէ իւր չուրջը եւ չ'հաւասարակշռելով իւր զօրութիւնն իրեն դէմ՝ գտնուող զօրութեանց հետ, աղիտաւոր պատերազմի մը մէջ նետուի, յուսախաբութիւն եւ պատրանք միայն գտնէ. արեան հոսումն, նիւթական ահագին ծախքեր, եւ մանաւանդ հայրենի հողէն հեռու գտնուող Յունաց կրելիք բարոյական եւ նիւթական փնտսներն պէտք է որ կառավարութեան գլուխ գտնուող անձանց ուշադրութիւնը գրաւէին. սակայն Պ. Տէլիեանի՝ նախարարապետը՝ խուլ կը մնայ կարծես Եւրոպիոյ ազդարարութեանց եւ հետեւելով ժողովրդային հոսանքին, կը նետուի ճանքու մը մէջ ուստից դժուար է յաղթական ելնել: Սա անուրանալի է թէ, հելլենական կառավարութիւնը մեծ յոյսեր հիմնած է Անգլիոյ մէջ նախարարական փոփոխման մը վրայ. Յոյները կը կարծեն որ, եթէ ազատական նախարարութիւն մը յաջորդէ պահպանողականաց, բրիտանական կառավարութիւնը տարբեր աչօք նկատէ զիրենք. սակայն, ենթադրելով թէ Պ. Կլատտըն կոչուի յաջորդել Լորտ Սալըզպըրիի, չպիտի ուզէ խախտել Եւրոպիոյ ներդաշնակութիւնն, ինչպէս այս օրերս Լոնտոնաբնակ նշանաւոր Յոյնի մը ուղղեալ հեռագրով մը արտայայտելով հանդերձ իւր համակրանքն Յունաստանի նկատմամբ, փափագ կը յայտնէր տեսնել որ « խաղաղութիւն տիրէ յԱրեւելս »: Պ. Կլատտըն կը յաւելու թէ Զերմապէս կը յուսայ որ Յունաստան կանգ պիտի առնուէ կռուի մտնելէ առաջ:

Աստ, ի դէպ է համառօտակի յիշել մայրաքաղաքիս յունական առաջնակարգ լրագրոյ մը տեսութիւններն այն ճնշման նկատմամբ զոր Անգլիա կը ջանայ բանեցնել Յունաստանի վրայ, խաղաղութեան պահպանման նպատակաւ. ըստ Նեօլոյսի, Լորտ Սալըզպըրիի աշխարհավարութեան հետեւանքը պիտի լինի Ռուսիոյ գիրկը նետել զՅունաստան:

« Ի՞նչ որ Ռուսիա չկրցաւ ձեռք բերել, ձեռքէ յոյն թերթն, այնքան զոհողութիւններով եւ արեան հոսմամբ, այն է արեւելքի «լափացո՞մբ» եւ արեւելեան ուրիշ բոլոր ժողովրդոց իրենց ազգայնութեան ուժերացումն, ինքնին պիտի կատարուի ընդհովանեալ Անգլիոյ: Փոքր Պետութիւնք պիտի պատժուին անոր համար որ յոյս դրած էին գոռոզն Ալպիոնի վրայ: Բայց, եթէ այս բան իրականանայ, պատմութիւնը պիտի «արձանագրէ այդ Փոքր պետութեանց դերեղմանին վրայ: — Աստ հանդէի պատիւ «ազատասէրն Եւրոպիոյ, որ թաղուած է «ձեռամբ Միջերկրականի Թագուհւոյն»:

Իսկ Բոնաֆանտինոսթոն, ո՛չ նուազ կարեւոր թերթ մը, առանց այսպէս ճշմարտամի խօսքեր ընելու, այնքան տարօրինակ կը գտնէ Յունաստանի եւ Թուրքիոյ միջեւ պատերազմ մ'արդիւնելու դադախարն, որ չուզէր անդամ հաւատ ընծայել. այլ յոյս կը յայտնէ որ ո՛չ Յունաստանն զէնք առնուլ հարկին մէջ գտնուի եւ ո՛չ ալ Անգլիա առիթ ունենայ ի դործ դնել իւր սպառնալիքն:

Թէ մինչեւ ո՛ր աստիճան կրնայ իրականանալ այս յոյս, պիտի յայտնուի այն պատասխանէն զոր Պ. Տէլիեանի տայ մեծ Տէրութեանց դիտողագրոյն զոր Աթէնքի դեսպանը տուած են, հելլենական նաւատորմին Պիրէոնէ մեկնելուն վրայ, ինչպէս նաեւ այն պատասխանէն զոր Եւրոպա պիտի տայ Թուրքիոյ վերջին ծանուցագրոյն, զոր յիշեցինք վերեւ:

\*  
\* \*

Վերջին թղթաբերով եւ նորագոյն հեռագրերով առնուած տեղեկութիւնք քիչ մը աւելի յուսադրական կ'երեւին խաղաղութեան պահպանման նկատմամբ:

Յանկարծական փոփոխութիւն մը տեղի



ուներեք է Սթէնքի դահլճին մէջ եւ հեւ-  
լէնական կառավարութիւնը, կ'երեւի թէ ի  
պատասխանի մեծ Տէրութեանց վերջին դի-  
տողագրոյն, ծանուցեր է թէ պիտի համա-  
կերպի Եւրոպիոյ կամայք: Միւս կողմէ,  
մեծ Տէրութիւնը պատասխանելով Բ. Դրան  
ծանուցագրոյն, կը վստահեցունեն զկայս.  
կառավարութիւնն թէ թոյլ չպիտի տրուի  
Յունաստանի որ եւ է շարժում ընել ծովու  
վրայ եւ թէ ցամաքի վրայ եւս վտանգ չը  
յուսացուիր այդ կողմէ:

## Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Տ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

11-17 ՅՈՒՆՈՒՍԻՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

—o—

Հռոմի կառավարութիւնը Կանան Տէրութիւն  
մը բաշխեց Խորհրդարանին անդամոց, որոյ  
պարունակած պաշտօնագրերէն կ'երեւի թէ,  
Արեւելեան Խնդրոյն մէջ, Իտալիոյ Աւստ-  
րիոյ, Գերմանիոյ և Ռուսիոյ գործակցած է  
ի պահպանում խաղաղութեան, և անկեղծ  
բարեկամ եղած է Թուրքիոյ: Յունաստանի  
պահանջմանց դաւով, Թուրքիոյ դաւառնե-  
րէն նոր հող կը խնդրէ, Պ. տը Ռօսիլանդ  
(արտաքին գործոց նախարար Իտալիոյ) բաց-  
արձակապէս յայտարարած է թէ հիմակ ո'չ  
մէկ Տէրութիւն փափաքող է Պերլինի դաշ-  
նագիրը վերաքննելու:

—Պ. Կլատտոնի նախարարութիւնը ժա-  
մանակին շատ աշխատած էր համոզելու Պապին  
որ Տըպլինի Արքեպիսկոպոս չկարգէ զՏոք.  
Ուօլը, Իռլանտայի ճինքնօրինական կուսակ-  
ցական ընտրելին այս բարձր պաշտաման  
համար: Տոք. Ուօլը հանրածանօթ էր իբրեւ  
ազգասէր եկեղեցական մը, ինքնօրինութեան  
դատին յարեալ: Գրուածներ և ճառեր ու-  
նի, որովք ջերմապէս ոյժ կուտայ Պ. Բառ-  
նէլի ազգային քաղաքականութեան: Պապը,  
սակայն, աւելի անսաց իւր հաւատարիմ  
իռլանտացի հաւատացելոց, քան բողոքա-  
կան կառավարութեան թախանձանաց: Տոք.  
Ուօլը անցեալ տարի Արքեպիսկոպոս ան-  
ուանեցաւ Տըպլինի, այն է՝ պետ Իռլան-

տայի կաթոլիկ հոգեւորականութեան, ի  
մեծ ցնծութիւն իռլանտացի ազգասիրաց:  
Այնուհետեւ Տոք. Ուօլը արդեամբ ցոյց  
տուաւ թէ Պ. Բառնէլի կուսակցութիւնն  
ո'րջափ իրաւունք ունէր զինք ընտրելի ներ-  
կայացնելու: Արքեպիսկոպոս Ուօլը, ըստ  
վերջին լրոց, Իռլանտայի զանազան կողմերը  
հովուական այցելութիւններ կ'ընէ, և ամեն  
ուրեք ազատօրէն կը խօսի ի նպաստ իռ-  
լանտական անկախութեան դատին: Անդ-  
լիական իշխանութեան ներքեւ, ամեն դա-  
ւանութեան հոգեւոր պաշտօնեայք անհա-  
մեմատ աւելի աղատ են քաղաքական դոր-  
ծոց վրայ ճառելու, քան կաթոլիկ կղերն  
ընդ Փրանսական իշխանութեամբ: Հետե-  
ւելով իրենց պետին օրինակին, Իռլանտայի  
ամեն դասու կաթոլիկ կղերք եռանդեամբ  
ոյժ կուտան ազգային դատին: Կղերին այս  
աջակցութիւնը թանկագին օգնութիւն մ'է  
Պ. Բառնէլի կուսակցութեան մղած մեծ  
պայքարին:

— Մաճառ Երեսփոխան Պ. Լատիսլաւ  
Չապօ, որ, ամբաստանած էր նախա-  
րարապէս Պ. Թիճայի մտերիմ բարեկամ  
բարձրաստիճան պաշտօնեայ մը՝ «Հունգա-  
րիոյ կառավարական հասութիւնք մէկ երրոր-  
դը մախած լինելուն» համար, անուանեց  
եղմտական նախարարութեան բարձրագոյն  
պաշտօնեայներէն մին, զՊարոն Արնիմ Փոտ-  
մանքի: Պ. Չապոյի ամբաստանութիւնը մեծ  
յուզում պատճառեց Հունգարիոյ մէջ, և  
հանրային կարծիքը միահամուռ կը պահան-  
ջէ խորհրդարանական խիստ ըննութիւն  
մը ամբաստանելոյն արաքննելուն վրայ,  
ճշմարտութիւնն երեւան հանելու համար:

ԱՆԿՈՒՄ ԼՈՐՏ ՍՍԼՁՊՐԻԻ

Լոնտոն, 28 յունվար

Լորտ Սալզբրի այսօր Օսպորնի գղեակը  
կ'երթայ՝ Թագուհոյն ներկայելու համար  
նախարարութեան հրաժարականը: Լորտ  
Սալզբրի երէկ միայն որոշեց հրաժարիլ,  
թէեւ նախընթաց օր իսկ գիտէին թէ Ու-  
ղերձին դէմ առաջարկուած բարեփոխու-  
թեան ընդունելութեամբ կառավարութեան  
կրած պարտութիւնն այս հետեւանքը պի-  
տի ունենար: — Կը կարծուի ընդհանրա-  
պէս թէ Պ. Կլատտոն պիտի կոչուի կազ-  
մել նոր նախարարութիւնն, այլ վերջ-  
նական բան մը չգիտցուիր:



Լոնտոն, 28 յունվար

Կառավարութիւնն այսօր միեւնոյն ժամանակ թէ՛ Երեսփոխանաց և թէ՛ Լորտերու ժողովին մէջ յայտարարութիւն մ'ըրաւ ծանուցանող թէ նախարարութիւնը դեկտեմբեր մ'ըրած է (հրաժարում) Թագուհւոյն, ոյր արդիւնքն յառաջիկայ երկուշաբթի միայն պիտի կրնայ ծանուցանել :

Այս յայտարարութենէն յետոյ, երկու ժողովներն ևս իրենց նիստերը փակեցին :

### Ն Ե Ր Ք Ի Ն

—o—

Էվգաֆի նախարար անուանեցաւ Կրթական նախկին նախարար Մուսթաֆա փաշա :

—Անգլիական դեսպանատան չորրորդ թարգման Պ. Վիլմոր, Էնկիլըփի անգլիական հիւպատոս անուանած է և վաղը իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի :

—Երեւոն Պարտուց յարգարման արժեթղթոց մէկ մասը տպագրուած է և Յունսթոքհոլմ սկսած է կնքել տալ զայնս, որով մէկ քանի օրէն շրջաբերութեան պիտի հանուին : Սոյն յանձնաժողովոյ մասնաճիւղն եղող Պարտուց քննիչ մասնախումբն որ ասկէ առաջ պահանջի մուրհակաց նախնական գործողութիւնն աւարտելով փոխարէն Էմիլիայեան տուած էր, ի մօտոյ վճարման գործողութեանց պիտի ձեռնարկէ Էմիլիայեան թուականին առաջնութեամբ :

—Յունաց Ամին. Պատրիարքը՝ Տ. Յովակիմ Դ. դարձեալ բաւական ծանր կերպիւ կը տառապի իւր հիւանդութեամբ և ժամանակ մը կատարեալ հանգիստ վայելելու պէտք ունի, բըժշկաց խորհրդով, Այդ պարագային մէջ, Ֆէնէրի Պատրիարքարանի ընթացիկ գործերը փոխանորդաբար պիտի վարէ Կիզիքոնի Մէտրապօլիտ և Օի-

նոդի երիցագոյն անդամ Տ. Նիկողիմոս, նախագահելով նաեւ ժողովոց նիստերուն :

—Քիոսէն կը գրեն թէ կղզւոյն դատարանաց քրիստոնեայ անդամոց շատերն հրաժարական մատուցեր են կուսակալ Ղալիպ փաշայի, բողոքելով վերջերս բարձրագոյն հրամանաւ եղած այն տնօրինութեան դէմ որ փաստաբանաց կ'արգելու յունարէն լեզուաւ դատ վարել, մինչ յունարէնը միակ լեզուն է որ առհասարակ կը հասկըցուի և կը խօսուի կղզւոյն մէջ :

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

Դահլիշէ կը գրուի մեզ թէ Գեր. Մատթէոս Եպիսկոպոս Իզմիրեան Եպիպատոսի Հայոց Առաջնորդ ընտրուած է՝ տեղւոյն Հայոց օրինաւոր ժողովով :

—Էջմիածնայ Ս. Սինոդի անդամ Գեր. Ներսէս Եպիսկոպոս հեռագիր մ'ուղղելով առ Գեր. Առնապետն Կրօն. ժողովոյ, խնդրած է որ հեռագրաւ ծանուցանէ թէ արդեօք Ամին. Տ. Յարութիւն Ս. Վեհապետեան հաստատուած է ի Պատրիարքութեան Երուսաղեմի և սկսած է զիւր նոր պաշտօն :

Գեր. Խորէն Ս. Նար-Պէյ պատասխանած է որ, թէեւ Ամին. Յարութիւն Սրբազան ընտրուած է Պատրիարք Երուսաղեմի, սակայն կայսերական հաստատութիւնն յետաձգուած է, զի դեռ եւս ժամանակ մը պիտի մնայ Պատրիարք Կ. Պոլսոյ :

Այս հինգշաբթի օր տեղի ունեցաւ Օսմ. Պանքայի մեծ սրահին մէջ, Միաց. Ընկերութեանց տարեկան Պարահանդէսի Կարգադիր Մասնախմբին առաջին նիստն ընդ նախագահութեամբ Պ. Ֆոսդըրի, Ընդհանուր Տնօրէն Օսմ. Կայս. Պանքային :



Ժողովը բացուելուն, վսեմ. Սերվի-  
լէն էֆէնտի շնորհակալութիւն յայտնեց  
առ Պ. Պոսդըր, ի դիմաց հայ հասա-  
րակութեան և Միաց. Ընկերութեանց,  
Ժողովոյն նախագահութիւնն ընդու-  
նելուն համար: Միաց. Ընկերու-  
թեանց նիւթական յաջողութեան մե-  
ծապէս նպաստող պարագայ մ'է, ըսաւ  
Ն. Վսեմութիւն, որ Օսմ. կայս. Պան-  
քային մեծայարգ Տնօրէնն ամեն տարի  
կը բարեհաճի ոտանձնել զայս կարի-  
փափուկ պաշտօն:

Պ. Պոսդըր, ի պատասխանի, շնոր-  
հակալութիւն յայտնեց իրեն եղած այս  
մեծ պատւոյն համար ինչպէս նաև վսեմ.  
Սերվիլէն էֆէնտի համակրարից խօս-  
քերուն համար: Յարեց թէ շատ սի-  
րով ոյժ կուտայ այն հանրագումար ձեռ-  
նարկութեան ուսման իրեալ են Միաց.  
Ընկերութիւնը, ի յառաջդիմութիւն և  
ի քաղաքակրթութիւն գաւառացի  
տղէտ և խեղճ Ժողովրդոց: Ինք վըս-  
տահ է թէ հայք բնաւ չպիտի դեղեւին  
իրենց կարողութեան չափով օգնելու  
Միաց. Ընկերութեանց կատարած գոր-  
ծին, երբ այդ գործ խորին համակ-  
րանք կ'աղղէ մինչև իսկ օտարազգի-  
ներուն:

Ժողովն ապա Օրակարգին անցնելով,  
իւր Դիւանն հետեւեալ կերպիւ կազ-  
մեց.

Նախագահ Պ. Պոսդըր

Դեր-Նախ. վսեմ. Սեպուհ էֆ. Մաքսուտեան  
Գանչապէս Մեծ. Մկրտիչ էֆ. Էսաեան  
Քորդուղար » կարապետ էֆ. Սըվաճեան

Որոշուեցաւ, որ ամեն տարւոյ պէս,  
տոմսակաց գինը լինի մէկ օսկի: Ծա-  
խուց գումարն ալ չանցնի 130 օսկին:

Պարահանդէսին օր որոշուեցաւ  
փետր. 20 (Հ. Տ.) հինգշաբթի, վար-  
դանանց զօրավարաց տօնի գիշերը:

Հովանաւորութեան մը պէտքին վը-  
րայ խօսուելով, Քարտուղար էֆէնտին  
ծանոյց թէ, ըստ յանձնարարութեան  
Պ. Պոսդըրի, դիմած է անգլ. դեսպան

վսեմ. Պըր Ռ. Հուայդի, Ն. Վսեմու-  
թեան հովանաւորութիւնը խնդրելով:  
Բայց որովհետեւ դեսպանն ի մօտոյ կը  
մեկնի, ցաւ ի սիրտ յայտարարած է  
թէ նիւթապէս անհնար է որ ընդունի:

Այս յայտարարութեան ժրայ, յանձ-  
նուեցաւ Պ. Նախագահին որ եթէ յար-  
մար կը գատէ, խնդրէ անգլ. նոր դես-  
պանուհի Տիկին Թորնդընի հովանաւո-  
րութիւնը:

Ժողովոյ նիստը վերնալէն առաջ,  
վսեմ. կարապետ էֆ. Շահպաղ ի դի-  
մաց հայ հասարակութեան շնորհակա-  
լութիւն յայտնեց այն ամեն օտարազգի-  
եաց, որք ամեն տարի կ'ընդունին Միաց.  
Ընկերութեանց պարահանդէսի կար-  
գադիր մասնախմբին անդամութիւնն,  
այսու ցոյց տալով իրենց համակրական  
զգացումներն առ հայ ազգն:

Ս. Էջմիածնից. — Վէհ. կաթողիկոսի ան-  
ձամբ արած կարգադրութեան համեմատ  
ձեմարանի լսարանի ուսանողները պէտք է  
ենթարկուեն ձեմարանի միւս դասատւերի  
մէջ սովորող աշակերտների մէջ սահմանուած  
կարգ ու կանոնին, և փակուած մնան, և  
ուսումնի աւարտելուց յետոյ պարտաւորուեն  
քահանայ ձեռնադրուելու, նրանք որոնք  
անկարող են ինչ ինչ պատճառներից հսկա-  
տակել այդ կարգադրութեան, պէտք է որ  
անմիջապէս հեռանան ձեմարանից:

(Նոր Դար)

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՆԻԹԻԻՆՔ

Կը լսենք թէ ՀնՁԱԿ անուն նոր  
զաւեչտաթերթ մը պիտի հրատարակի  
կիսամսեայ, խմբագրութեամբ Պ. Տիրան  
Փափաղեանի, նախկին աշակերտ Խառ-  
գիւղի ներսիսեան վարժարանին, նախ-  
կին դերասան, և այլն:

Արտօնատէր Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ